




ՍԻՈՆ
Կրօնական Գրական
Բանասիրական



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏ. ԵՐՐԱՌԱՂԵՐԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹՅԱՆ

ՀՈՐ
 ԵՐԶԱՆ

1961

ԼԵ.
 ՏԱՐԻ

«سِيُون» مجلة أرمنية شهرية، دينية، أدبية، ثقافية. للغة والبيان

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology
 Printed in JERUSALEM

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ս. Ծննդեան պատգամ	հրկո	1
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ		
— Խաղաղութիւն		3
ԿՐՕՆԱԿԱՆ		
— Ամանորի մատուցներ	ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ	6
ԿԱՆՈՆԱԳԻՏԱԿԱՆ		
— Վարդապետութեան ասիւնանները Հայ Եկեղեցւոյ մէջ	«ԼՈՅՍ»	8
ԲԱՆԱՍՏԵՂՅԱԿԱՆ		
— Կապոյտ վարդը	ՎՏԱՐԱՆԴԻ	11
ԵԿԵՂԵՅԱ – ՊԱՏՄԱԿԱՆ		
— Եկեղեցւոյ միութեան վերաբերեալ եստութիւններ	Թրգմ. Մ. Ա. Օ.	14
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ		
— Peintres et Sculpteurs Arméniens	Շ. Վ.	17
— «Լիակատար Քերականութիւն Հայոց Լեզուի Համեմատութեամբ 562 Լեզուների»	ԱՆՈՒՇԱԿԱՆ ՎՐԻ. ԶՂԶԱՆԵԱՆ	19
Մի փորձ «Դիրք Թղթոց»ի բերի մասերի վերա- կանգնման ուղղութեամբ	ՊՐՈՅ. – ԴՈԿՏ. Լ. Մ. ՄԵԼԻՔԻՍԵԹ – ԲԷԿ	23
ԻՄԱՍՏԱՍԽԱԿԱՆ		
— Միջոցը եւ ողից	Թրգմ. ՇԱՀԷ ՎԱՐԻԱՊԵՏ	27
ՇՆՈՐՀԱՆՈՐԱԿԱՆ ԳԻՐ՝ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին		30
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ		
— Հեռագիրներ		31
— Եկեղեցականք – Իեմականք		31
— Պատճառականք		31
ՏԽՐՈՒՆԻ		
— Տիրահայր Յակոբ Սահակեան		32

ՍԻՈՆ - ի Տառեկան Բաժնեգիրին է՝
բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիրին 20

Redaction of the Armenian Monthly SION

Armenian Patriarchate,

P. O. B. 4001

Old City - Jerusalem

Via Amman (Jordan)

—≡ Ս Ի Ո Ն ≡—

Լ.Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

2013

1961

◀ ՅՈՒՆՈՒՐ ▶

Թիւ 1

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԶՕՐ

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

ԺՈՂՈՎՈՐԴ ՀԱՅՈՑ ՈՐ Ի ՅՈՐԴԱՆԱՆ, Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Ի ՍՓԻՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ

Կեցած մեր Տիրոջ Ծննդեան Սրբաանին մէջ, որուն հաւասքը բաւան դառնէ ի վեր կը լեցնէ մեր հոգին, յանուն Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ ներկայ հաւատաւոր մեր ժողովուրդին, բեգի կը փոխանցեմ նորէն այս գիշեր, ժողովուրդ Հայոց, Յիսուսի Ծննդեան եւ Ասուածայայտութեան Բաղդ աւետիսը:

Սրտառուջ այս յայտարարութեամբ, Ասուած կը մասնակցի մարդուն կեանքին ու պատմութեան, եւ կը լեցնուի բացը որ կար դառնէ ի վեր երկնքին ու երկրին, Ասուծոյ եւ մարդուն միջեւ: «Այսօր երկիրս երկինք եղեն» կ'ըսէ սրբազան մատենագիրը, ակնարկելով այս գիշերուան խորհուրդին եւ ուրախութեան:

Յայտնութեան արգասիքը, Ասուծոյ սէրն է մարդուն համար, ու չկայ աւելի սրտազնուիչ բերկրանք, քան այն մտածումը թէ մենք որդիներ ենք Ասուծոյ եւ եղբայրներ իրարու: Վասնզի մարդուն մեծագոյն առաքինութիւնն ու գիտութիւնը եղբայրութիւնն է:

Երկինքներէն երկիր իջնող Մանուկը, խսացումն ու խորհուրդն է Տիեզերական Լոյսին, որ միակ իսկութիւնն է բոլոր գոյութեանց եւ զօրութիւններու: Ճառագայթներն այդ Լոյսին օր մը նուազեցին ու փայլեցան Գանգէսի եւ Նեղոսի ջուրերուն խաղաղաւէտ բարութեանը մէջ, ծնունդ տալով տաճարներու երազին եւ բուրգերու յաւերժութեան, եւ որ այսօր իր խանձարուրդ կը բաճայ այս Սուրբ Այրին խորը, Ասուածային եւ մարդկային յիշքեամբ: Երանի՜ անոնց, որոնք քննութեան են ճիշդը յորդակոծակ Լոյսը, քաղանցուելու անկէ, ցոլացնելու զայն, հղօրապէս քրքուալու անով, հասնելու համար ճիշդագոյնութեան, վերածելու ինքնինքնին Բաղդութեան, սիրոյ, ներման, հասնելու համար հոգիի իրականութեան փառքին, անսահմանութեան Քրիստոսի:

Այս գիշեր նորէն բաց է երկինքը եւ ճառագայթ ուղիներով հրէշակ-

ները երկիր կ'իջնեն, աւետելու Բանին Յնունդը որ աշխարհ կուգայ ոչ միայն մեր մեղքերու քաղաքեանը համար, այլ որպէսզի ցնծայ աշխարհը այն Բանին համար, որ երազն է եղած դարերով մեր ամբողջ էութեանը, կարօք, պապակը մարդկութեան, այն քաղցրագին Բանը որ արեւի կաթիլէն մինչեւ երջանկութեան տօնը կ'երկարանդուի եւ որ Հայ եկեղեցւոյ մեծ աղօթողի շրջանին վրայ կը վերածուի սրտառու աղերսանքի մը, խնդրելով որ վարասին մէջն ու մառախուղը, չհաւան չարին ու յուսահատութիւնը, տարագրուի չազնապն ու տիրութիւնը աշխարհի երեսէն եւ մարդոց սիրտէն, եւ վերսկիւն արձագանգէ Մեծ գիշերը լեցնող հրեշտակներու աւետարտ ձայնը, «յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հանութիւն»:

Այս մտածումով ու հաւատով է որ հեղի կ'աւանդեմ, ժողովուրդ Հայոց, Յիսուսի Սուրբ Մենդեան աւետար, դուն որ միշտ ընդունած ես զայն իբրեւ կեանքի թուակ եւ ապագայի առհասաջեան: Շարունակէ հաւատալ Յաւերծի Մենդեան եւ մարդուն առնուածացումին, մի՛ ամպոսեք յոյսիդ պայծառութիւնը, մնացիր միշտ հաստատ հաւատքով մտապահեցիւնդ, որքան ալ դառն ըլլան օրերու բերումները եւ շրջանիդ մտաուցած բաժանները:

Ու գիտեմ թէ դուն կը հաւատաս, ժողովուրդ Հայոց, հաւատացեք ես միշտ, արդարութեան, իրոյ, խաղաղութեան եւ անոնց անկորնչելի փառքին: Քու պատմութիւնդ արնագեղ ու հսկայամարտ քերթածն է այդ խոյանքին: Դարեր շարունակ արիւն եւ երազ, երկինքի արդարութեան եւ խաղաղութեան ծառար, իբրեւ սրայոյդ պատգամներ շողացին վառ ի վառ քու զաւակներուդ ողբերգութեանը վրայ: Բայց դուն կըցար պահել քու հաւատքդ, որովհետեւ գիցցար հաւատալ Բերդեհէմի խորհուրդին եւ ամէն տարի Մանկացեալ Աստուծոյ հետ կըցար մայրացնել քու հոգիդ:

Դուք, զաւակներ Հայաստանեայց եկեղեցւոյ, որ կը հաւատաք Աստուծոյ Ողբիւն մարմնով երեսնալուն, մեզի հետ միասին այս գիշեր ձեր երկուրդն էութեան խորհրդէն երգեցէ՛ք Հայ քերթուին Մենդեան օրհնութեան այս սրտառու հրաւերը. «Խորհուրդ մեծ եւ սքանչելի որ յայտն առաւ յայնեցաւ, որդիք մարդկան օրհնեցէ՛ք զի վասն մեր մարմնացաւ»:

Այսպէս եւ երգեք դարերով մեր ցեղէն անոնք՝ որոնց նայածքը լեռներն ի վեր փայլէ է սիրած, թօքուելով իրենց հոգիներէն դարերու ժանգն ու փոշին, սրբազորեղով ժամանակը, բերելու համար մեզի չմոռնող զապաւարներու ազամանդ սլաքը, պինդ բռնուած իրենց սրտերուն խորը: Այսպէս էր եղեալառ քաղաքը այդ մարդոց, որոնք գօտեպինդ նուանեցին մեր դարերը, բերելու համար մեզի այս գիշերուան Աստուծոցայոյն խանձարութիւն արեւափառ հաւատքը, չթողարհելու որ մեր նախնազգիքը խաղալիք դառնայ ժամանակի բերումներուն եւ վայրահան քանդանոցին, ներհնչելով մեզի մեր փրկութեան խաբիսին եղող յոյսը, հագցնելով մեզի հոգեւոր դիցազնութեան մը անփերելի զէնն ու զրահը:

Մեր Տիրոջ Ս. Մենդեան այս բարեպատեհ առիթով, մեր խորին երախտագիտութիւնն ու անկեղծ հաւատարմութեան զգացումները յեր սիրելի Թագաւորին, Հիւսէյն Առաջինի, ինչպէս նաեւ իրմով գլխաւորուած Յարգանքի



1934 Ձ ա հ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

Տարին կը փակենք գոհունակութեամբ և փառք կուտանք Աստուծոյ՝ երբ կը նայինք նոր Տարինն հետ մեր յոյսերով դժուած հեռանկարին:

Գոհ ենք որովհետև Ս. Յակոբեանց դարսւոր Աթոռը վերադտած է, խաղաղութեան հետ, իր կոչումի ուղին:

Փառք կուտանք Աստուծոյ որ արդար կ'ընէ մեզի համար յուսալ որ նոր Տարին իրեն հետ պիտի բերէ խաղաղութեան պտուղներ՝ պայծառացում և յաւաքողութիւն:

Տօնեցինք Ս. Աթոռիս հիմնադիր Առաքեալներուն տօնը ուրախ սրտով, որովհետև անոնց հիմնած Ս. Աթոռը թափուր չէ՝ այլևս, այլ վերածաղկած՝ ընտրութեամբ և զահակալութեամբը Ս. Պատրիարքին, զխաւոր երաշխիքը մեր վաղուան յոյսերուն:

Տօնեցինք Ս. Երուսաղէմի և Քրիստոնէական Եկեղեցւոյ առաջին նահատակին և վկային՝ Ս. Ստեփանոսի տօնը և հպարտացանք երբ Առաքեալներու թիւով Սարկաւազներ և Ուրարակիրներ՝ սաղաւարտներով թագաւորուած շարունեցան Աստուծոյ Ս. Սեղանին դիմաց և երգեցին ապրումով՝ «Ստեփանոս քաղցրիկ տատրակ . . .»:

Որովհետև մեր մտքերը զացին դէպի ժառանգաւորաց Վարժարան և Ընծայարան, ուր չորս տարիներու ամայութենէ ետք վերսկսած է կեանքը, ոչ միայն վերաբացումովը դասարաններու դռներուն, այլ և վերակումովը կանոնաւոր դասաւանդութեանց, Եղիշէ և Թորգոմ երջանկայիշատակ պատրիարքներու մշակած աւանդական ծրագիրներու հիման վրայ:

Ինչ աւելի քաղցր միտքարութիւն քան այս մէկը, չորս երկար տարիներ ապրեցան այստեղ ինքզինքնին համալսարանական հռչակող և տիտղոսակիր մարդիկ, որոնք, փոխանակ անեցնելու և բարձրացնելու վաղուան մեր Եկեղեցիին մշակները պատրաստող վարժարանը, վանեցին անկէ ուսման ամէն փա-

վարիչներուն: Տէրը թող միշտ անուսան վրանէ Հաւիմական Գահը, եւ անոր անգուգական Գահակալին շնորհէ անփորձ, երջանիկ եւ արդիւնաւետ տարիներ, իրագործել կարեւալու իր ժողովուրդին արդար ակնկալութիւնները:

Այս սրբական գիշերուան խորհուրդին ընդմէջէն, մեր սրտերու խորունկէն կ'ելկենք անգամ մը եւս Հայ Եկեղեցւոյ դարաւոր մալթանք, ազնուաւիր եւ աստուածաւոր քաղաւրներու ձօնեղումը. «Թագաւոր փառաց Աստուած, Հովիտ կենդանաւոր, նորոգեա համապաղ զկենդանութիւն եւ զերջանկութիւն մերոյ քաղաւորին, զի օրհնեսցում գեղ, Տէր, այժմ եւ յաւիտեան»:

փառք և կարգապահութեան ամէն զգացում, դասաւանդութիւնը փոխանակեցին ցուցարարութեամբ և թողուցին դպրոց մը հաղիւ տասնեակի մը հասնող անփորձ աշակերտներով:

Չե՛նք ամբաստաներ, որովհետեւ չե՛նք հաւատար հին հաշիւներ մաքրելու սին մտայնութեան մը օգուտին: Այլ կ'ուզենք արդարացնել մեր ուրախութիւնը և միութարութիւնը, երբ կը տեսնենք որ մթաղնած երկնքի մը վրայ յանկարծ պայծառօրէն ծագող արևին նման կը փայլի փառանգաւորացն ու Ընծայարանը, իր հին փառքին և աւանդութեանը մէջ:

Կը հաւատանք զբական աշխատանքին և նուիրումին միայն, ձգելով եկող սերունդներուն և պատմութեան չար որոմը մաքուր ցորենէն զատորոշելու գործը:

Վերահաստատուած խաղաղութիւնն է անա որ կարելի՛ ըրաւ զբական աշխատանքը վանական կեանքի բոլոր մարգերէն ներս և ամէն մակարդակի վրայ:

Խաղաղութեան հետ վերահաստատուեցաւ նաև ազգային արժանապատուութիւնը և վստահութիւնը:

Որովհետեւ Վանքին կից Ոստիկանատունը չի՛ խռովիր այլևս երբ կը լսէ քաղցր զօղանլը մեր զանգակներուն, որոնք, տակաւին երէկ, չարագործ ձեռքերու մէջ, կը գործածուէին ցոյցի, հայոյանքի և անպատկառութեան հրաւիրելու համար ժողովուրդ մը, որ միշտ յարգանք և կարգապահութեան ոգի միայն ցոյց տուած էր Պետութեան:

Չկան այլևս հանրադրութիւններ և գաղտնի զբարտազրեր, որոնք կը ծառայեն միայն ու միայն հայուն անունն ու վարկը սեցնելու յաշիւ իշխանութեան:

Ս. Յակոբի զանգակները վերագտած են իրենց քաղցր եղանակը և Միաբանութիւն ու ժողովուրդ՝ Սրբատեղիներու ճամբան:

Անա թէ ինչո՛ւ արդար են մեր յոյսերը՝ Նոր Տարուան սեմին: Աթոռս կը վերագտնէ այսօր իր հպարտ և արժանաւայել հին կեցուածքը՝ Ազգին ակընկալութիւններուն դիմաց և ճակատաբաց կը յայտարարէ. Նոր Տարին պիտի ըլլայ աշխատանքի և արդիւնքի, քրտինքի և նուաճումի, խաղաղութեան և հոգեկան բաւարարութեան տարի մը:

Որովհետեւ խաղաղութիւնը իջած է ոչ միայն յարաբերութիւններուն մէջ որոնք կը կապեն Միաբանութեան անդամները իրարու մէջ և ժողովուրդին հետ, Ս. Աթոռը՝ Ազգին և Աթոռն ու Ազգը՝ Պետութեան հետ, այլ իջած է ան շատ աւելի խորը՝ խռովայոյզ սրտերուն մէջ բոլոր անոնց որոնք կ'ապրին այս Հաստատութեան մէջ, շուրջ կամ հետ:

Այս, այն խաղաղութիւնն է, զոր Քրիստոս տուաւ Իր Առաքեալներուն, բաժանումի սրտազին խօսքերուն հետ. «Խաղաղութիւն զիմ տամ ձեզ, ... , ոչորպէս աշխարհ տայ, տամ ես ձեզ ... »:

Կայ խաղաղութիւն մը, անզիտակից և կարծես պատահական, որ կու գայ կիրքեր և շահատակութեան պարտականքի զրգռող խռովարարներու պակասէն. տեսակ մը թմրութիւնը չարին: Այս չէ՛ խաղաղութիւնը որուն կ'ականարենք և զոր ցանկացինք մեր Աթոռին:

Այլ միևրը՝ այն խաղաղութիւնը որ կուգայ սրտատե՛ս արթնութենէն և ճշմարտութեան բացուող աչքին կը յայտնէ սնտափառութեան, վէճին, զգուշութիւն և մարդկային տկարութիւններէն յառաջացող զգացումներուն և շարժումներուն փնասակար և աղիտալի դիմագիծը: Զգաստութեան և պայծառատես զիտակցութեան բերած խաղաղութիւնն է այս, որը երկիր իշաւ Յիսուսի այրին վերև երգող հրեշտակներու յայտնութեամբ և առաւ մարդուն՝ սինն ու հողայինը լքելով՝ աշխարհին ու մարդոց՝ վերէն նայելու ու զանոնք սիրելու ոգին:

Քրիստոսականդ այսպիսի խաղաղութեան մէջ միայն հալիս մեղք, հալածին դէք, շնչին յանցանք, խղին կապանք, խորտակին շղթայք, կենդանածնին մահացեալք, բոժկին հարուածք . . . և թագաւորէ Ձեռն քո ամենակալ, քաւիչդ ամենայնի . . . »:

Որքան բուռն է այս առթիւ մեր բաղձանքը որ նո՛յն ոգին և նո՛յն խաղաղութիւնը իբրև «ցօղջբաղցրածաւալ» իշնէր և թարմացնէր նաև հոգիները բոլոր մեծ ու՛շագոյններուն, որոնք տակաւին կը յամենան անմտօրէն կարծրացուած ժխտական դիրքերու վրայ, Աթոռիս նկատմամբ: Մեզի համար ցաւ է հաստատել որ կան տակաւին չկողիացած մտքեր, որոնք աչքերնին կամաւոր կերպով փակած՝ կաթողիկոսական զոյգ Աթոռներու իմաստուն և խաղաղարոյր վերաբերմունքին Աթոռիս նկատմամբ, կը շարունակեն մտքեր խռովելու փորձեր ընել: Մենք կը ցաւինք ոչ թէ որովհետև նման թունաւոր սլաքներ որևէ բախտ կրնան ունենալ ճեղքելու Ս. Յակոբեանց վանքի հաստատահիմն պարիսպները, այլ որովհետև պիտի փափաքէինք որ Աստուծոյ խաղաղութիւնը իշած ըլլար նաև մեզանի մը կողմներուն վրայ եւ և իսնդարտեցուցած շարժումներ՝ որոնք քնաս կրնան բերել միայն զանոնք հրահրողներուն և մեր Ս. Եկեղեցիի գերագոյն շահերուն:

Անցնող տարուան սեմին չէինք կարծեր որ տարուան մը կարճ միջոցը պիտի բաւէր որ կատարուէր հրաշքը և Ս. Յակոբի մասին կարելի ըլլար գրել զոհունակ այս տողերը: Այժմ կը հաւատանք հրաշքին և վստահ ենք որ նոր սկսող տարուան վերջաւորութեան և յաջորդի սեմին, պիտի կարենանք նո՛յն լաւատեսութեամբ և նշուաբանութեամբ գրել նաև Հայաստանեայց Եկեղեցւոյ ամբողջութեանը համար:

Թող խաղաղութեան Մանուկի Այրը և Անոր ծառայող Միաբանութիւնն ու Ժողովուրդ ըլլան ոչ միայն՝ ունենդիր, այլև արձագանգ խաղաղութեան պատգամին: Թող Նոր Տարուան մեր աղօթքը բարձրանայ խաղաղած սրտերէ խաղաղութեան համար մեր Եկեղեցիին, մեր Ազգին և համայն մարդկութեան:

ԿՐԹՆԱԿԱՆ

ԱՄԱՆՈՐԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

1960 տարին ոչ ևս է: Հին տարիներու նման ան ալ հինցաւ և թաղուեցաւ ժամանակի անսահման ուղիւնքին մէջ, ժամանակը դադար չունի, կ'ընթանայ անընդհատ: Տարիներ կանգ չեն առնիր, հինը կը սահի ու կ'աներևութանայ, նորը անմիջապէս կուգայ ու կ'ողջունէ մեզ՝ ամէն առտու նորածագ արեւի նման:

Տարին հին կը կուռչի երբ, անիկա մեզմէ կը բաժնուի: Իրականութեան մէջ սակայն ո՛չ հին կայ և ո՛չ ալ նոր: Այսօրը նոր է երբ զայն անցեալի հետ բաղդատենք, իսկ հին է վաղուան քով: Ուրեմն նորութիւնը բացարձակ չէ, այլ յարաբերական:

Ամէն օր նոր է այն մարդուն համար որ կը նորոգուի շարունակ: Մերունքներ կան որոնք մտքով թարմ ու սրտով երիտասարդ են, միւս կողմէն տարիքով երիտասարդներ ալ ունինք՝ որոնք գլխով հինցած և զգացումով լճացած կեանք մը կ'ապրին: Առաջինները տարիքի յառաջացումով աւելի նորոգուած ու երիտասարդացած են, մինչ վերջինները իրենց չափահասութեան տարիքը տակաւին չթեւակոխած՝ արդէն հինցած են ու ծերութեան նշաններ ցոյց կուտան: Ուրիշ խօսքով, մէկը ծեր-երիտասարդ է, իսկ միւսը՝ երիտասարդ-ծեր: Առաջինը այս օրը կ'ապրի, իսկ երկրորդ՝ երէկը: Մէկը ծերութեան մէջ նոր է, իսկ միւսը՝ երիտասարդութեան մէջ հին:

Ընկերութեան մէջ նոյնիսկ չեն պակսիր այսօր անհատներ, որոնք թէ՛ն և այս դարու զաւակ, բայց իրենց զարգացած մտքով, նրաքցած զգացումով և ազնուացած վարք ու բարքով գալիք տարիներու աւելի բարձր քաղաքակրթութեան մը չափանիշը կը ներկայացնեն: Նոյնպէս անհատներ ալ կան, թիւով դժբախտաբար խիստ շատ, որոնք իբր թէ քսաներորդ դարու մէջ կ'ապրին, սակայն մտքով Միլին Դարուն կը ծառայեն և իրենց վարք ու բարքով չորս-հինգ հազար տարի առաջ մարդկութեան ապրած

վայրագ կեանքին կենդանի օրինակները կը հանգրստանան:

Տարիներ կուգան ու կ'երթան, ժամանակը կասի չի գիտիր. մեր կամքէն անկախ՝ ունի կը սահի շարունակ: Ան որ վայրկեաններուն իրեն բերած պատահականութիւններէն օգտուելով չի դարգանար, ետ կը մնայ ու կը նահանջէ: Ասիկա բնութեան անյղիչ օրէնքն է:

Որքան մարդիկ արդեօք տարի մը առաջ, 1960ի արշալոյսը ողջունած առնեն, սրտաբուխ բաղձանքներ ու ցեղեցիկ ծրագրեր յղացած էին աւելի բարձր կենցաղի մը հետեւելու համար, բայց դժբախտաբար չյաջողեցան և տարին վերջացուցին վարք ու բարքով աւելի տղեղցած և ապակեանած: Լաւ սկսան, բայց յոռի վախճանի յանգեցան. հողիով առաջնորդուեցան, իսկ մարմնով վերջացուցին: Գաղափարականով ճամբայ ելան և պարտուած դուրս եկան: Պէտք է ցաւիլ այս պարտութեան համար, սակայն պէտք չէ յուսահատիլ. քանզի յուսահատութիւնը մահ է, իսկ յոյսը՝ կեանք:

Անոնց համար՝ որոնք 1960ի ընթացքին չկրցան աւելի բարձր կենցաղի մը հետեւիլ, անաւատի իրենց առջև 1961ը նորանոր պատահականութիւններ կը ներկայացնէ. կրնան իրենց ծրագրերը կրկին փորձիլ: Նոր տարուան առաջին օրը կեանքի մոտեցնող սկսեցնողն է: Օր մը՝ որ սկիզբն է նոր շրջանի մը, որուն իւրաքանչիւր վայրկեանը իր անծանօթ պարունակութեամբ կը սպասէ մեզի որ ապրինք և յարաւանք կեանքի նոր շաւիղներուն մէջ առանց յուսահատելու:

Նախօրէն Պոնափարթ անգամ մը պարտութեան պարագային այսպէս արտայայտուեցաւ. «Թեւումիս քեւ յաղթեց, բայց միւս կողմէն իրեն վրայ յաջորդ անգամ յաղթանկ ցանցելու կերպը ինձի սուղեկուց»: Մեծամեծ յաղթանակներ հրեմն պարտութեանէ ետքը կուգան: Կեանքի մէջ ձախուրդութիւններ կան, որոնք շատ անգամ յաջողութեան կ'առաջնորդեն: Ուստի պէտք չէ վհատիլ, այլ պէտք է յուսալ միշտ: Ամանորը մեծագոյն պատգամներն են մին մեզի բերած այս նոր յոյսն է:

Ամանորը մեզի կուտայ նոր ներշնչում, նոր իղծեր, նոր հեռանկարներ, նոր երազներ և նոր յոյս: Յոյս մը՝ որ կեանքի յա-

ջողովիան էական պայմաններէն մէկն է ամէն առաքարէզի մէջ և ամէն ձեռնարկի համար:

Շատեր իրենց բարի բաղձանքները իրագործելու մէջ կը ձախողին, որովհետեւ անոնց հետ միասին չեն ունենար ո՛չ միայն այս յոյսը, այլ նաև պէտք եղած կամքի ոյժը, կորոյն ու յարատեւութիան ոգին: Այս տուեալները նոյնիսկ անբաւական են յաջողելու համար կեանքի պայքարին մէջ: Պէտք է ասոնց միանայ նաև աղօթքը: մարդկային հոգիին հպումը առ Աստուած:

Անոնք որոնք չունին իրենց կեանքին մէջ ներշնչումի մասնաւոր վայելանքներ չեն կրնար իրերուն վրայ վերէն նայիլ և հոգեւոր ուժով լեցուիլ: Բարոյական յազութանկներ բարոյական ուժով ձեռք կը բերուին: Այս ուժը մարդկային հոգին կը ստանայ Տիեզերքի Մեծ Հոգիին հետ շաբունակ շփման գաղով:

Ոմանք կ'առարկեն թէ ժամանակ չունին բարոյական մշակոյթի համար: Ասիկա շատ անհիմն չքանդանք մըն է: Ինչպէս կէտքէ կը մասնանշէ, «Ամեն վարդ բաւականաչափ ժամանակ ունի, եթէ զայն լաւագոյն կերպով գործածել պիտեայ»: Մեր բարոյական կարողութիւնները զարգացնելու եթէ ժամանակ չունինք, ուրիշ ի՞նչ կարեւոր բաներու համար պիտի գործածենք մեր ժամանակը: Կարեւորը մտնալ և անկարեւորին նուիրուիլ՝ յիմարութեանց մեծագոյնն է: Փննելուն կ'ըսէ. «Ժամանակը մեզի տուած է յաւիտեանականութեան հոգ օտելու համար, եւ յաւիտեանականութիւնը ինքնին կարճ պիտի զլլալու մեր ժամանակի կորուստին վրայ, եթէ զայն ի զուր վատնենք»:

Իւրաքանչիւր վայրկեան օր մըն է զայն գործածել գիտցողին համար, և իւրաքանչիւր օր՝ տարի մը, ամբողջ տարի ճանչցողին քով: «Եթէ ժամանակը կտրեմ եւ մեծ աւելի կը կարենցնենք զայն ի զուր վատնելով, կը պատգամէ Վիկտոր Հիւգո: Իսկ ձե՛րմի Թէյլըր կ'ըսէ. «Գործածե՛ ժամանակը եթէ կը գնահատես յաւիտեանականութեան արժէքը: Արեւը չես կրնար ետ բերել, վաղապէս վրայ չես կրնար վստահիլ, այսօր միայն բուկղ ե, զոր եթէ չ'օգտագործես» կը կոտմցնես, եւ ինչ որ կը կոտուի՝ յաւիտեան կորսուած է»:

Կորսուած ժամանակը իրաւ է թէ չի

կրնար ետ գտնալ, բայց ներկայ վայրկեանին արժէքը կրնայ կրկնապատկուիլ լաւ կերպով օգտագործուելով: Մարդ մը ուրիշին տասը ժամուան մէջ արտադրածը մէկ ժամուան մէջ արտադրելով, իր ժամանակը տասնապատկած կ'ըլլայ: Այս իսկ պատճառաւ այսօր քաղաքակրթութեան երկրներուն մէկ ժամը աւելի կ'արժէ քան կիսաքաղաքակրթ ժողովուրդներուն լամ մէկ օրը:

Կեանքի արժէքը տարիներու շատութեամբ չէ որ կը չափուի, այլ տնոր ուրիշներու ընծայած օգտակարութեամբ: Ոչ թէ երկար ապրիլու, այլ կարճ կեանքը արդիւնաւորութեամբ երկարելու մէջ կը կայանայ կեանքի մը իսկական արժէքը: Մեծն Աղեքսանդր երկտասարդ տարիքին բաժնւաւեցաւ այս կեանքէն, բայց կարճ ժամանակաշրջանի մէջ իր կատարած արշաւանքներով աշխարհի քաղաքակրթութիւնը յեղաշրջեց, մինչդեռ Մաթուսաղայի ապրած 969 տարիները զուրկ են նշանաւոր դէպքի մը արձանագրութենէն: Յովհաննէս Մկրտիչ և Ստեփանոս Նախավկայ շատ երկար չտպրեցան, բայց իրենց պատգամը տակաւին թարմ է այսօր քրիստոնէայ համայնքներուն համար: Յիւնոս՝ մեր կրօնքին հիմնադիրը, շատ կարճ կեանք ունեցաւ և հրապարակի վրայ հազիւ երեք տարի երեցաւ, սակայն հարիւրաւորներ և հազարաւորներ իրեն սիրոյն համար զոհուած են և կը գոհուին այսօր:

Յաջողութիւնը ոչ թէ երկար՝ այլ արդիւնաւոր կեանք մը ապրելու մէջ է, իսկ արդիւնաւոր կեանք մը բուրբուրու համար ալ հարկ է մեզի տրուած ժամանակի իւրաքանչիւր երկվայրկեանին վրայ գուրգուրալ: Ժամանակը, որպէս թանկագին գանձ, մեր կեանքին դրամագուլուն է: Մեր երջանկութիւնը մեծ մասամբ կը կայանայ ժամանակը լաւ ծրագրելու և զայն ի բարին գործածելու մէջ: Շէշքսպիր իր կեանքի վերջաւորութեան բացազանչեց. «Ես ժամանակը վատնեցի, եւ անա՛ ժամանակը զիս կը վատնէ»:

Կեանքի մէջ մասնաւոր պատահութիւններ ժամանաւոր պարագաներու ներքեւ մեր առջև կը բացուին: Երկարգործը երբ գարնան չցանէ, փախցուցած կ'ըլլայ պատահաւորութիւն: Երկարգործը երբ երկաթը տաք

տաք չծծե՛լ, չի կրնար իր ուզած ձեւը տալ անոր: Նմանապէս երիտասարդութիւնը իր ոսկի պատհանութիւններով մեր կեանքին մէջ մէկ անգամ միայն մեզի կը ժպտի: Զափահասը միւս կողմէն ունի տարբեր պատհանութիւններ՝ որոնցմէ զուրկ է այնպիսի, իսկ ծերունին իր կարգին ունի ուրիշ առաւելութիւններ, որոնք օրհնութեան մեծ միջոց մը կրնան զառնալ իրեն, երբ ի վիճակի ըլլայ զանոնք գնահատել:

Վերջապէս, ամէն մարդ որ աշխարհ կուգայ, հոս կատարելիք գործեր ունի կեանքի տարբեր շրջաններուն մէջ, չըջանաներ՝ որոնց մէջէն միայն մէկ անգամ պիտի անցնի: Ամէն տարիքի ու հասակի մէջ մեր պարտականութիւնները լիովին կատարելու մէջ կը կայանայ կեանքի վերջնական յաւոդութիւնը, ինչպէս նաև մեր երջանկութիւնը:

Վերջացող տարուան հուսկ պատգամն է ուրեմն մեզի՝ զգաստանալ և խրատուիլ անցեալի փորձառութիւններէն, և հին տարիներու մէջ պատահած սխալները այլևս չկրկնել նորին մէջ, ու փոխանակ օրերով այդ հին սխալներուն վրայ ողբալու, անոնց մեզի տուած դասերէն միայն օգտուիլ և զանոնք միանգամ ընդմիշտ դադրեցնել:

Իսկ նոր տարուան աւելի մեծ ու թարմ պատգամն է մեզի՝ տարին լաւ սկսիլ, լաւ շարունակել ու լաւ վերջացնել, տոգորուած նոր յոյսերով, նոր ներշնչումներով, նոր ըմբռնումով ու նոր գաղափարականով մը:

ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ

Յո՛րէզնօ, Գալիլէ:



ԿԼԱՆՈՆԵԳԻՏԿԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄԷՋ

Բ.

ՎԱՐԴԱՊԵՏՈՒՆ ՊԱՅՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Սարգիս Շնորհալի այն ատեն կը ձեռնակէ Կարողիկեայց Թուղթեր մեկնելու, երբ կրօնաւորութիւնը դադրած է արդէն յարացոյց (իտէալ) կեանք մը ըլլալէ: Վանականներ մոռցած իրենց բուն կոչումը, տարբեր տարբեր զբաղանք գտեր են արդէն իրենց համար. մէկը վաճառաւորութիւն կը սիրէ, մէկը՝ ալիքործութիւն, ուրիշ մը՝ կոռուսի աճաքսիւրութիւն, ուրիշ մը՝ կասակեղութիւն (= խեղկատակութիւն) կամ ստախսութիւն և դասադաւանութիւն (= պօշոպողալըք), ուրիշ մը՝ բուն և դասադաւանութիւն (= անգործութիւն): Իրաւ որ գրքի և գրքի աշխատաւորներ պակաս չեն կրօնաւորներու մէջ, բայց մեծամասնութիւնը այդ յիշուածներէն կը կազմուի, որոնք ոչ միայն զուրկ են Սուրբ Գրոց գիտութենէ և քարոզելու և վարդապետելու շնորհներէն, այլ մանաւանդ կ'ելլեն խնտաւոր կը քննադատեն ու կը խծթեն բուն վարդապետները. — «Եւ այսպիսիքն ոչ միայն զրկեալ գտանին ի գրոց գիտութենէ, այլ և այլոց ի սոյն պարագելոցն դա՛ռն դատաւոր և հաւատարմ քննիչ բանից և բառիցն լինին, ոչ յօգուտն հայելով, այլ զկարգ բանիցն զիտելով» (Մեկն. Կրիլ., Բ. տպ., 1896, եր. 11): Երբ կարճ կը խօսուի՝ երկարը կը գովեն. երկար խօսուած ատենն ալ կարճ և ազդուն կը փնտռեն: Էնչուրի կողմէն ալ երբ ապարդ բառիցն հանդիպին և ձկնորսացն խօսից, զնուրբն և զմանուածոյն և զբաղմաքանդակն գովեն: Եւ դարձեալ՝ ընդդէմ նմին զգիւրաւուրն և զտանց (խոր) բառիցն յարգեն և մեծարեն» (Նոյն անգ):

Յառաջարանին մէջ պատմուած այս իրաւութիւնները յարմար առիթներով չեղտուած են Մեկնութեան մէջ: Դժուար է՛ հետեւցնել՝

թէ նոյնինքն Սարգիս Շնորհալի մէկն էր այն պարսաւուողներէն — և այս տեսակէտով շատ մեծ արժէք ունին իր տուած տեղեկութիւնները —, և անշուշտ ի դուր և նախանձի համար պարսաւուողներէն, որոնք իրենց օրտին ցտակը, իրենց վիշտերը, իրենց պատրանքները կը ծալլեն ու կը ծրարեն իրենց գրչի աշխատութիւններուն մէջ, իրենց բոլոր հոճոյքը կը փնտռեն գործունէութեանց և իրենց ինքնամփոփ մտածութիւններուն մէջ: Եւ այսպիսիներն են դարձեալ՝ որ լուրջ աշխատութիւն մը ունին, տեւական աշխատութիւն մը, գեղեցիկ արդիւնքը իրենց կեանքին, իրենց պաշտօնին, որ պահ մը խօսքն է, կենդանի խօսքը՝ բնմի վրայ, խանդավառող, ազդող և շինող խօսքը, որ ետքը կը մարմնանայ գրչով և կը մնայ՝ սերունդներուն խօսելու համար:

Վարդապետութիւնը՝ իր մեծամասնութեան գէպի շահավաճառութիւն կամ այդեպործութիւն ևայլն ըրած չափազանց միտումներուն համար, առիթ կուտայ որ բոլոր կարգը բամբաստի, նոյնիսկ իր արժանաւորներով և արժանաւորագոյններով: Ասոնց կերածն ու խմածը, հազուադէպ և կենցաղաւարտութիւնը աշխարհականներուն նախանձը կը շարժէ (անկ, էր. 654—758): Կրօնաւորութիւնը իր մէջ համերաշխ չէ: Այդ դարերուն՝ կրօնաւորական սքեմը կարծես պատշաճ մըն էր հարստանալու, վանքերու մէջ տիրող կարգն ու կանոնը, թէն սկզբունքով Ս. Բարսիկ կանոններուն վրայ հիմնուած, բայց գէշ հասկնալով՝ տեղի տուած է որ կրօնաւորներն առանձին կամ փոքրիկ խմբակներ կազմեն միեւնոյն վանքին մէջ, միեւնոյն առաջնորդին աջին առիւ, իրենց հաշուին շահին, շահագործեն իրենց վանքերը՝ վայելելով հանդերձ միաբանական հասարակաց իրաւունքները:

Այն կրօնաւորները, որոնք ուսուցանելու, վարդապետելու շնորհն ունին և ուսման կը պարագային, ըսել է՝ միւսներուն պէս արտոյնայգիի գործերով չեն կնրար ժամավաճառ ըլլալ, կ'ամբաստանուին այս աշխատանքը(?), գործունեայ(?), կրօնաւորներէն իբր դատարկակեանքներ, իբր իշամեղուներ, որ ուրիշներու աշխատութիւններ

րով կը կերակրուին (անկ, էր. 75—76; Հմմտ. էր. 122, 654),

Սարգիս Շնորհալիի բացատրութիւններուն մէջ չափազանցութիւններ չկան. եթէ իրողութիւնները ա՛յնքան դառն են հայ կրօնաւորներու կեանքին պատմական այս շրջանին մէջ ալ, պատճառը այն է՝ որ ճշմարիտ և թանկագին արժէքներ միշտ նախատուած և անարժաններ փոռաւորուած են. բայց այս փաստը ինքնախաբուծիւն մըն է, որ կը պաշտպանուի տգիտութեամբ, կը քաջախիռուի կաշառքով և վերջապէս իր ետեւ կը թողու տխուր իրողութիւններու շղթայ մը, որուն օղակները կը գտնենք, զոր օրինակ, Սարգիս Շնորհալիի Մեկնութեան հատուածներուն մէջ:

Քիչ մըն ալ քրքրեք ուրիշն Կաթողիկէայց Մեկնութիւնը:

Մեկնութիւն՝ Յակոբոս Առաքեալի «Մի՛ բազում վարդապետս լինել, եղբար՛ք իմ, գիտաւշիք՝ զի մեծ դասաստան ընդունելոց եմք» (Յակ. Գ. 1) խօսքերը՝ շատ ճարտարութեամբ կը յարմարցնեն և կը մեկնեն իրեն ժամանակակից վարդապետներու վրայ:

Պօղոսի ըսածին պէս, ամէնքը միեւնոյն շնորհն չունին. չափն մէկուն իմաստութիւն տուած է, մէկուն գիտութիւն, մէկուն մարգարէութիւն, մէկուն լեզուախօսութիւն, մէկուն թարգմանութիւն, մէկուն հրաշագործութիւն: Այս տարբեր շնորհներու հետեւանքով կ'ըսէ. «հերձուածք և բաժանուածք մ'ունի յիկեղեցիս». վասնզի ամէն ոք սկսաւ իր ճշմարիտ գոգիւ հակառակ իր ընկերին: Եւ ոչ միայն ամէն մէկը կը պարծէր իր ճշմարիտով և կ'արհամարհէր իր ընկերիը, և այլ և իրենց վարդապետներուն անունով ալ կը յոխորտային իրարու դէմ, ըսելով թէ իմ վարդապետը առաքելն է, քուկդ այնպէս չէ. իմս Քրիստոսէ ընտրուած և կոչուած է, քուկդ՝ մարդոցմէ: Միայն աշակերտները չէ՝ որ կ'ընէին այս խայտառակութիւնները, այլ վարդապետներն ալ սկսան կեղծաւորել և անուշ լեզուով շատ մը աշակերտներն որոշալ: Աշակերտներն ալ՝ ճշտ մարմաշինոյ լսելիաց իւրեանց», վարդապետներ կ'ընտրէին և կը բռնուէին անոնց ստապատիր խօսքերէն: Այսպիսիներուն է որ Առաքեալը կ'ըսէ. «Մի՛ բազում վարդապետս լինել, եղբար՛ք իմ: Կը յանդիմանէ

վարդապետները, որ մարդկային պատուի համար չկեղծաւորեն, և պատիւ չփնտռեն եթէ Աստուծոյ չեն կոչուած, որպէսզի Աստուծոյ արուած շնորհքները պատճառ չընեն ամբարտաւանութեան և մեծախօսութեան իրենց ընկերներուն հանդէպ. ասկէ զատ, որպէսզի այն որ դեռ չէ հասած թի կատարեալ գիտութիւն՝ թող վարդապետութեան թեկնածու ըլլայ, այլ մնայ աշակերտական կարգին մէջ՝ մինչեւ որ թի ծառան հասնիցէն: Աշակերտներն ալ կը յանդիմանէ, որպէսզի շատ վարդապետներ չունենան (չառ վարդապետ չփոխեն), գովասանքներով չկայարտացնեն զանոնք և կամ չկեղծաւորեն, որպէսզի խիստ վարդապետներէ չփախչին և չատեն զանոնք, և անուշ լեզուները, որոնք ականջները կը կախարդեն, սիրեն և անոնց հնազանդին և ամենուն առջեւ գովարանեն . . .

Անոնք որոնք կ'ուզեն առզգակի մեկնել գաստուածային զգիրս, նա և վասն Աստուծոյ խօսելու պէտք է ըլլան շատ երկիւղած, շատ արթուն, միշտ ազօթասէր և անդադար ընթերցող Հին և Նոր Կտակարաններու: Մասնաւորապէս պէտք է ունենան մաքուր խիղճ և անախտ հոգի, որպէս զի արժանի ըլլան եզրուութեան շնորհաց: Եթէ ասոնք չկան, երկար ժամանակ և աշխատութիւն պէտք է, որ բուն վարդապետին քով սորվին և կատարակապէս տեղեակ և հոգաւ ըլլան ուսման և վարդապետութեան, և ետքը, ինչպէս կ'ըսէ Աստուածաբանը, հոգեւոր և մարմնաւոր հասակի կատարելութեամբ խօսիլ, հրապարակ ելլիլ:

Աստուծոյ և անոր պատգամներուն վրայ խօսելու համար կատարեալ գիտութիւն պէտք է:

Բայց մենք ի՞նչ կը տեսնենք մեր շուրջը. «Առօրեայ իմաստուն եւ ինքնամեղադրեիլ աստուածաբան, առանց ուսման վարդապետ, եւ առանց դեպքերիլոյ նաթաւան, եւ առանց ինքնեզման աստուածային կրօն և աշխատութեան ուսուցիչ»: Կը զարմանամ, այնպէս կը խրոխտան և գիտնալ կը ձեռացնեն Ս. Գրոց իմաստը, որպիսին նոյնինքն Աստուծոյ հոգիով Ս. Գիրքը գրողներ և մեզի տուողներ չեն գիտեր. անոնցմէ ալ աւելի համարձակութեամբ կը վարդապետեն և սոչ երկնէին ի ստութեան կործանմանէն:

Եթէ սկսեալով սխալողներ պիտի չկրնան ազատիլ Աստուծոյ դատաստանէն, որչափ ևս ուրեմն պիտի դատապարտուին անոնք՝ որոնք գիտեն թէ տիրապէս չեն գիտեր և կը ձեռացնեն թէ փոխեն, և փառասիրութեան համար ստութեամբ կը մեկնեն Ս. Գիրքը թագում ունկնդիրներու առջեւ և ուղիղ գրուածները չարաշար կ'ուսուցանեն (Մէկն. Կրկ., եր. 107-110):

Սարգիս Շնորհալի ցաւած սրտով, բայց ոգևորած շեշտերով կը պատմէ իրեն ժամանակակից կարգակիցներուն շօշուկները:

Իմաստուն վարդապետի յաւակնութիւնը ունինք՝ երբ դեռ աշակերտութեան կարգն իսկ չենք անցած. ամէն տեսակ, անկարգութիւններ ունինք. նախաձեռնութիւն, չարագրգուցիւն, հպարտութիւն, ամբարտաւանութիւն, փառասիրութիւն, ապստամբութիւն, արծաթսիրութիւն, շոգոժութիւն, յաշտութիւն, ատելութիւն, սխալակութիւն, լեզուազարուցիւն, քաւարասանք, շատախօսութիւն, խեղկատակութիւն, երկուստ, որովայնամուրութիւն, արքեցութիւն, մարդահանութիւն, քինախնդրութիւն եւայլն, ևայլն:

Այս է պատճառը որ ստուգներու և աշխարհաւորիկներու պէս ջորիներով կը շրջինք, ջորիներ տուններ կ'երթանք, պարիսպներու վրայ կը քարոզենք, հրապարակներու մէջ կը համարձակինք խօսելու. ո՛չ թէ Աստուծոյ փառքին կամ ընկերաց օգտին համար կը գործածենք մեր տաղանդը, այլ փառաւորուելու և ռաբբի (= վարդապետ) ըլլուելու համար: Ասոր համար անհամայնք և ոտից կոխան եղանք ո՛չ միայն մարդոց, այլ և ծառայ եղանք զանազան մեղքի ախտներու և փառասիրութեան:

Արատուած Լոյս Շարքաթերէն, 1906

(Շարունակելի՝ 3)



ԿԱՊՈՅՏ ՎԱՐԴԸ

Ս. Արուսյ Սարկաւագներուն

Անոյ՛ւ պարմանն,
 Լարած օղեղն իր սրբազան
 Հեռուներս անհորիզոն,
 Ուրախ, սրտով,
 Համբայ ինկած հրաւճն ինչպէս,
 Ան որոնեց,
 Ինչ որ գրուած բաժինն է միշտ
 Կեանքի սեմին,
 Մեր բոլորին:
 Ուր կը սրուի մեզ ողջունել,
 Նոր արեւներ,
 Ըստուերն որոնց մենք կը բերենք
 Մեր արեան մէջ,
 Անհորիզոն, անյիշատակ,
 Հեռուներէն:
 Ու կը կարծենք,
 Ըսկաւառակն անոնց կախել,
 Իբրեւ կանթեղ ու փայտութիւն,
 Ուսայնին դէմ մեր օրերուն:

Համբայ ինկած հրաւճն ինչպէս,
 Ան որոնեց,
 Ինչ որ բաժինն է որոնել
 Մեր բոլորին,
 Գարունքին մէջ մեր արիւնին:

Պարտէզ մըն էր ...
 Որուն ցանկին՝ տեսիլք մ'ինչպէս
 Իրմէ բըխած, իրեն դարձող,
 Շղարհն հազած այն երազին,
 Զոր ան ունէր եւ դեռ ունի,
 Նաւակ մ'ինչպէս, բաց առագաստ,
 Զուրին վրայ կեանքի մթին,
 Կեանքի անվերջ յորձանքներուն:

* * *

Ու մրբու՛ւի ծոցէն խորունկ,
 Ձեռք մ'ըսպիսակ,
 Աւելի քան շուշանները ծըմակներուն,
 Երկարեցաւ,
 Ըսպասութիւն անոր մասաւ,
 Մասի ծայրին՝ վարդ մը ներմակ.
 — Դիր մազերուդ՝ անոյ՛ց պարման,
 Հըրաւքն այս սուրբ,
 Ու սուրբէ թէ գոյնը մէկ է
 Խանձարուրին ու պատանքին:

Ու մրբու՛ւի ծոցէն կրկին,
 Ձեռք մը կարմիր,
 Երկարեցաւ աչուրներուն այդ պարմանին,
 Մասի ծայրին՝
 Բաժակ մը բոց, վարդը կարմիր.
 — Դիր այս սրտիդ՝
 Եւ մի մոռնա՛ր թէ գոյնն անոր
 Հիւսուած թելէն կըրակներուդ,
 Բոցն է անմար,
 Որմէ բարիք եւ որմէ մահ
 Կը բաշխուի նոյնամանակ:

Ու մրբու՛ւի ծոցէն անա,
 Երկարեցաւ ձեռքը լուսէ.
 Մասներուն մէջ վարդը՝ կապոյ՛ց.
 — Ալ չես գտնէր ճամբաներուդ,
 Այս բաժակով վարդը կապոյ՛ց,
 Նայուածքիդ դէմ բացուած հեռու
 Աւարաններուն:
 Կրնայ սենալ ներմակն անբիծ,
 Ու մոխրանալ կարմիրը վառ,
 Քեզ ընելով մռայլ հրդեհ,
 Բայց չի թողմիր կապոյ՛ցն այս սուրբ
 Տարիներէն ու մեղքերէն
 Մեր ամենուն:

* *

Անցան օրեր ու տարիներ,
 Երկարեցաւ
 Շուրջ ներմակ, շուրջ կարմիր
 Ժամանակին.
 Մենք քիչ անգամ գիտեմք յարգը
 Տարիներուն,
 Որ, ակնթարթ վալելի մէջ,
 Հազար ամ է, մեզագիշեր,
 Ցաւին վըրայ է երբ բացուիր:

Վարդը ներմակ՝ տոգոյն կարմիր,
 Կարմիրը վառ եղաւ մոխիր,
 Կըսուցին Տակ
 Մանրաւրլաք կսկիծներուն:
 Կըսաւ ջինջ անոր դէմքին,
 Այդ պարմանին,
 Հագաւ դալուկ, հագաւ խորեոմ,
 Եւ բոցն անոր երակներուն,
 Ծուխը մոռալ առանց թելի,
 Գալար, գալար,
 Փաթթեց համբան անոր սրտին:
 Տաղնապ, կրակ, հանոյք, արցունք,
 Որոնք կէս դար,
 Կը հալածեն մարմինը խեղճ,
 Դըրօք մ'ինչպէս խաղաղութեան
 Ու պարտութեան
 Կը ծածանին,
 Վըրան աւեր անոր մարմինն:

Մարմար է գործ, վարդը ներմակ,
 Վարդը կարմիր՝ հագած մոխիր.
 Կապոյտն է լոկ, գոյնն անթառամ
 Երկնի դէմքին,
 Արեւոյսներ ապրող անեղծ
 Սրտերուն խոր,
 Պարմաններուն եւ ծերերուն,
 Որ կը վառի նրազ մ'ինչպէս
 Աննիւթական,
 Կեանքին մէջէն, յաւերժօրէն,
 Ու մահուան դէմ:

Վ.ՏԱՐՍՆԴԻ

ԵԿԵՂԵՑԱՆ՝ ՊԵՏՄԱՆԿԱՆ

ԵԿԵՂԵՑՈՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդ, եթէ կ'ուզուի միութեան համար բանակցութեան մտնել, պէտք է նախ և, առաջ ճշգրիտ թէ ի՞նչ պիտի իմացուի միութեան անունին ներքեւ, Ով որ այդ խնդրին վրայ կ'ուզէ գրել, պէտք է համարձակ ըլլայ, երկզկիմ բառեր չգործածէ, և ոչ ալ զիմացինը խաբէր աշխատի: Միութիւն ուղղորդ անկեղծ չէր ըլլար, եթէ շատ անգամներ տեղի ունեցածին պէս, ուզէր միութիւնը ցուցնել իբրեւ հորայրական համաձայնութիւն, և սիրտին մէջ ծածկէր ներքին բաղձանք մը, զիմացինը պատեւրազմի մէջ յաղթուած թշնամիի պէս խռնարհած տեսնելու: Պէտք չէ գեղեցիկ բառերով թակարդ լարել, այլ գաղափարները ճշգրիտամբ բացատրել իրենց իսկութեան մէջ: Արդեօք հնար չէ՞, որ միութեան ճիշդ իմաստը հաստատուի երկու ներքին հարցափառներու միջին տեղը, այնպէս որ հնար ըլլայ երկու գաղափարներէն ալ իմաստի տարրեր առնել ու խառնել: Ես միութիւն անունին ներքեւ երբեք չեմ իմանար կատարեալ հպատակութիւն մը, որ նոյնիսկ բառին իմաստին հետ հակասական կը հնչէ: Արեւմտեքի մէջ ալ բոլորովին անյայտ եղած չէ այն միտքը, թէ Արեւելեան Եկեղեցւոյն Արեւմտեանին հետ միութիւնը պէտք է կատարուի այնպիսի կերպով, որ տարբեր ըլլայ հերետիկոսներու դարձին առձառք, որ թէպէտ միութիւն անունը գործածուած է, բայց նշանակութիւն ունեցած չէ, քանի որ գործով պարզապէս հպատակութիւն փոխուած է: Գործնականին մէջ Արեւմտեքին բրածը միշտ այս է եղած: Հերետիկոսներուն դարձին և ընդհանուր միութիւն անունով կատարուած գործողութեան մէջտեղ միակ տարբերութիւնն այն է, որ Արեւելեքներուն, երբ Հոսովի հետ միանան, կը ներուի պահել իրենց ծէսը և իրենց կազմակերպութեան

ինչ ինչ կէտերը, նոյնիսկ այսպիսի ալ իբր մեծ շնորհք մը նկատելով: Հոսով երբ միութիւն հաստատուելու վրայ կը խօսի, հիմակ ալ պարզապէս այդ կ'իմանայ. ոսկայն հնար չէ որ միութիւնը այս իմաստով առնուի, որ է Արեւելեան Եկեղեցւոյն Հատին Եկեղեցւոյ լուծին ներքեւ խռնարհիւրը, ինչպէս որ այս վերջին ատենները իրաւամբ նկատել տուաւ Հայր Նիկողայոս Ֆրանքո, միութեան վրայ խառնելէն լեզուով հրատարակած գիրքին մէջ: Գրիտանէնութեան այս երկու ճիւղերը բացարձակապէս երկու քոյրեր են իրարու հանդէպ, և ամէն տեսութեամբ իրարու հաւասար:

Արեւմտեան Եկեղեցին, իբր Արեւմտեան Եկեղեցի, առանձնաշնորհութիւն ունենալու և օրէնք դնելու իրաւունք չունի: Ընդհակառակը, Արեւելեան Ժողովուրդներն աւելի հին են քան թէ այժմեան Արեւմտեան Ժողովուրդները: Միայն խնդիր կրնայ ըլլալ Հոսովիս Եպիսկոպոսին հանդէպ ցուցուելիք հպատակութեան մասին, որչափ որ նա ընդհանուր Եկեղեցւոյ վրայ իրաւունքներ ունի, բայց ոչ երբեք Արեւմտեան Եկեղեցւոյ հանդէպ խոնարհելու մասին: Դժուարութիւնն ալ ճիշդ այդ կէտին վրայ է, քանի որ Հոսովիսին պատգովիւրը Արեւելեաններու աշխրհ իբր Հատինական հաստատութիւն մը նկատուած է, և ոչ երբեք կաթողիկոսայ և ընդհանրական հաստատութիւն մը: Իրենց տեսութեամբ, պապին հպատակիլ և Հատին Եկեղեցւոյ հպատակիլ, միևնոյն բանն ըսել է: Ուստի պէտք է լաւ գնահատել պապին գիրքը իբր գլուխ Հատին մասնաւոր Եկեղեցւոյ, և այն գիրքը զոր ունի ընդհանուր Եկեղեցւոյ նկատմամբ: Բայց սովորաբար այդ երկու կէտերը կը շփոթուին, և ոչ ոք հոգ տարած է այդ երկու գիրքերը յստակ կերպով դասադասելու: Նոյնիսկ պապին հանդէպ պէտք չէ Արեւելեան Եկեղեցւոյ յատկացնել իրաւապաշտպանութիւն մը, բառին կատարեալ և բացարձակ իմաստով:

Պատմութիւնը մոռացութեան կը տրուի, չի նայուի թէ ի՞նչ էր այդ մասին նախկին Եկեղեցւոյ ըմբոստմը: Ահա թէ ինչու կ'աշխատուի Արեւելեան Եկեղեցւոյ այնպիսի կացութիւն մը ստեղծել, զոր նա երբեք չունեցաւ:

Եկեղեցական կարգաւորութիւնը, ինչ-

պէս որ այսօր կը ներկայացուի, նախկին ժամանակներու մէջ եղածէն տարբեր է: Ընթերցողը ինչ ինչ առանձնաշնորհութիւններ տուեր էր Ս. Պետրոսի, բայց մենք հրեք նշան մը չենք գտներ, որ Ս. Պետրոս հպատակելու պէտք ունեցած ըլլայ Ս. Պետրոսի հանդէպ: Ընդհակառակն, Ս. Պետրոս ինքզինքը կը նկատէր իբրեւ Ս. Պետրոսի ըստ ամենայնի համահաւասար եղբայրը, և կը պարծենար իսկ որ զայն յանդիմանած է (Գաղ. Բ. 14): Նմանապէս Կաթողիկէ եկեղեցին ալ՝ երկար գարեբու միջոցին երբեք իսկապէս միապետութիւն եղած չէր: Բարձրանալու եպիսկոպոս ազատօրէն իր թիւը կը կառավարէր, իսկ Հռոմայ եպիսկոպոսը մասնաւոր իրաւունքներ ունէր ընդհանուր եկեղեցւոյ գործերով ալ զբաղելու և մեծ իշխանութիւն կը վայելէր: Բայց այդ իշխանութիւնը միշտ աւելի ընդարձակ էր Արեւմտեացի մէջ՝ որուն ինքը պատրաստ էր, քան թէ Արեւելի մէջ: Նա իրաւ իրաւաւորութիւն չէր գործածեր Արեւելի թեմերուն վրայ, և միայն անուղղակի քաղցեցութիւն կը գործածէր, երբ որ խղիւղը ընդհանուր եկեղեցի, այ գործերուն կը վերաբերէր:

* * *

Դիւանաւորապէս իններորդ դարէն առդին, եկեղեցական կազմակերպութիւնը արժատապէս փոխուեցաւ Արեւմտեացի մէջ: Եկեղեցին բացարձակ միապետութիւն դարձաւ, և նմանեցաւ պետութեան մը որ գաւառներու բաժնուած է: Հռոմի եպիսկոպոսը առէր եպիսկոպոսներու անմիջական մեծաւորը եղաւ: Ամէն եկեղեցական գործեր սկսան Հռոմի մէջ կարգադրուիլ: Հռոմի համար կազմուած օրէնքները, առէն եկեղեցիներուն համար կ'անոն գործող եղան: Այդ ձևը կերպով մը հետեանքն եղաւ Սուրբ Ժնիգորեան կանոններուն, որոնք այն միջոցին երևան եկան: Այդ ձևը ստուգու լաւ և օգտակար եղաւ Արեւմտեացի համար, որովհետեւ համարաշխարհները զօրացուց և սովորութիւնները միացուց: Բայց անգլիական արքայականութիւնն սկսաւ աշխատուիլ, նոյնիսկ Արեւելեան եկեղեցւոյ վրայ ալ տարածել, և այս եղաւ ստուգապէս զլիսաւոր պատճառներէն մէկը, որ եկեղեցիները բաժանման առաջնորդեց:

Կոստանդնուպոլսոյ եկեղեցին երբեք կը զիջէր Հռոմի պահանջներուն առջև, և նոր գրութեան համակերպող կը կարծուէր. բայց ըրածը միշտ ակամայ էր և իր օրտին հակառակ: Միւս կողմէն, Հռոմի միշտ իր գրութեան վրայ յամառ պընդելը, անհնար դարձուց միութեան յաղութիւնը: Այժմ Արեւմտեացի մէջ սովորութիւն դարձած է այդ գրութիւնը, որ հազար տարիէ ի վեր սովորական եղած է, և ուրիշ կերպ գրութեան մը գաղափար իսկ չկայ, և նոյնիսկ մտքէ ելած է թէ առջի ատենները գործերուն պայմանները տարբեր էին: Երբ որ նախկին քրիստոնէութեան վրայ կը խօսուի, այնպէս կը կարծուի թէ հին ատեններն ալ եկեղեցական կազմակերպութիւնը ճիշդ այսօրուան ձևին պէս էր: Այս պատճառով երբ որ միութեան վրայ կը խօսուի, միշտ այժմեան տիրող միապետական ձևին համաձայնեցնելու ջանք կը թափուի:

Երբ որ Արեւելեաններուն կը թողուի իրենց ձեռքը պահել, միևնոյն ատեն կ'ուզուի զանոնք հպատակեցնել կատարելապէս պապին իրաւասութեան, և մինչև իսկ Հռոմի օրէնք մէկ յանձնաժողովին (congregation) իշխանութեան: Անոնք վրայ պարտք կը դրուի պարզապէս լատինական օրէնքներու համակերպիլ, և ամբողջ լատինական աստուածաբանութեան հետեւիլ՝ իր ամէն մասերուն մէջ: Երբ խօսուի ուղիւղով, արեւելածէն կաթողիկէներ այլևս ուրիշ բան չեն, բայց եթէ արեւելեան տարազով լատիններ՝ եթէ երբեք լատին տարազ ալ հազած չեն, և արեւելեան աղօթքներ արտասանող լատիններ, և ոչ երբեք ճշմարիտ Արեւելեան եկեղեցւոյ վաւերական ներկայացուցիչներ: Անոնք պարզապէս հետեանք և արեւելեան եկեղեցական պատմութեան կենդանի հակասութիւններն են:

Հետեալը Հռոմի հետ միացեալ Արեւելցիներուն գոյութիւնը, ոչ միայն ընդհանուր միութիւնը յառաջնեցնելու և յաղորդեցնելու չի ծառայեր, այլև զայն յապաղելու և արգելելու կը տանի: Որովհետեւ Արեւելեանք, գաւառն տեղեւոր կընան ըսել: — Ահա ինչ որ մեզի ալ պիտի պատահի, եթէ երբեք Հռոմի հետ միութիւնը ընդունինք: Արեւելեաններ ըլլալէ պիտի դադրինք և

Հատիններ պիտի դառնանք։ Մեր Եկեղեցւոյն արժանապատուութիւնը պիտի ստորնանայ, և փոխանակ թագուհի մը ըլլալու, տղախին մը պիտի դառնայ։ Այն դիրքը, որ Հոռոմի հետ միացող Արեւելեցիներու կը տրուի, անոնց՝ նոյնիսկ ուրիշ կաթոլիկներու հետ ունենալիք յարաբերութեանց կը փնաւէ, որովհետեւ զանոնք կրօնով միայն կաթոլիկ և կրօնով ոչ-կաթոլիկ կը նկատեն։

Եւ այդ բանը չիմ ըսեր, իբր թէ Հոռոմի հետ միացող Արեւելեանները չտրէի, ընդհակառակն, ես շատ կը շահագրգռուիմ անոնց կապութեան շուրջ, և անոնց համար պ'աշխատիմ։ Իմ ըսել ուզածս այն է, որ ըստ ինքեան բաղձալի էր զանոնք ուրիշ կերպով միացած ստանել, որ աւելի համապատասխան ըլլար Արեւելեան Եկեղեցւոյ արժանապատուութեան։

* * *


Հոռոմի հետ միացեալ Արեւելեցիները, զոր մենք մեզի վստակած ենք, անշուշտ պէտք է պահուին։

Բայց Արեւելեան Եկեղեցին ճշմարտապէս մեզի քաշելու համար, պէտք է մինչեւ հիմա գործադրուած ձեռն տարբեր կերպ մը գործածել։ Արեւելեան Եկեղեցին պէտք է ճշմարտապէս մնայ ինչ որ է։ Նա պէտք չէ որ նկարագրի փոխէ։ Միութիւն բառը չի նշանակեր երբեք, որ մէկ մասը ամբողջաբար փոխուի, միւսին հետ յար և նման ըլլալու համար, այլ կը նշանակէ, որ երկու իրեր շարունակեն ըլլալ ինչ որ են, և միայն իրենց մէջ փոխադարձ յարաբերութիւններ ունենալու աշխատին։ Ծշմարտապէս անիրաւ և ամբողջ պատմութեան դէմ հակասող բան մըն է կարծել, թէ Արեւելեան Եկեղեցին Հռոմայ Եկեղեցւոյն մէկ մասն է, կամ մէկ հպատակ գաւառն է՝ որ անկէ բաժնուած է։ Այդ բանը կրնայ ըստիւ Արեւելեացի բողոքականներուն համար, որոնք ատեն մը Հատին Եկեղեցւոյն մէկ մասն էին, բայց ոչ երբեք Արեւելեաններուն համար։ Հետեւաբար պէտք է որ Արեւելեան Եկեղեցին բացարձակապէս անկախ մնայ, և ինքնուրոյն կառավարուի, ինչպէս կը կառավարուի, և ինչպէս որ կը կառավարուէր քրիստոնէութեան սկիզբէն ի վեր։ Հոռոմի հանդէպ ունենալիք յարա-

բերութիւնները պէտք է այնպէս ըլլան, ինչպէս որ էին նախկին քրիստոնէութեան ատեն՝ բաժանումէն առաջ։ Անշուշտ Արեւելեան Եկեղեցին պիտի չվարանի ճանչնալ Հռոմայ քահանայապետին այն իրաւունքները՝ զորս նա ունեցաւ և զորս գործադրեց բաժանման թուականէն առաջ։ Նա պիտի ընդունի անշուշտ անոր որոշումները, ընդհանուր քրիստոնէութեան պատկանող մեծ խնդիրներու մէջ։ Առող Հոռոմի գերակայութիւնը պահպանուած՝ իսկ միութիւնն ալ իրողութիւն մը եղած կ'ըլլայ, և ոչ թէ պարտապահուած մը։ Եթէ երբեք Հոռոմ կարինայ այդ գաղափարը ընդունելու որոշում մը տալ, միութիւնը նմարաւոր կ'ըլլայ։ Բայց որչափ ատեն որ ճիշդ կը թափուի Արեւելեանները այժմեան տիրող եկեղեցական դրութեան հպատակեցնելու, միութեան համար ըլլալիք ջանքերը ընդունան պիտի ըլլան։ Պէտք է զոհողութիւններ ընել որպէսզի միութիւնը իրականանայ, պէտք է հրաժարիլ ինչ ինչ սովորութիւններէ, որոնք քանի մը դարերէ ի վեր երևան եկած են։ Արդ՝ ասանկ ծանրակշիւ գործ մը, ինչպէս է քրիստոնէութեան հաշտութիւնը, չա՛րժեք որդիք որ անոր համար պէտք եղած զոհողութիւնները ըլլան։ Որքա՛ն մեծ պիտի ըլլար պապութեան ստանալիք պատուը, եթէ նա օր մը յանձն առնէր այդ զիջողութիւնն ու զոհողութիւնը՝ ընդհանուր բարւոյն և քրիստոնէութեան շահուն համար։

ԹԻՐԳՈՒ Մ. Ա. Ս.

(Շարունակելի՝ 2)



ԳՐԱԴՈՍԱԿԱՆ



Տասը երկար տարիներու աշխատանքի պտուղը — բայց տարիներու տքնութենէն աւելի՝ ճաշակի, արուեստի բարձր հասկացողութեան և ժամանակին ու միջոցին մէջ այնքան ծաւալուն իր նիւթին համադրական ձև մը տալու արուեստագէտի իր շիղը — այս է որ կ'ողջունենք ու կը շնորհաւորենք Օննիկ Աւետիսեանի մէջ, երբ աչքէ կ'անցնենք պատկառելի հատորը, զոր կը կոչէ «Հայ նկարիչներ եւ Քանդակագործներ» (Peintres et Sculpteurs Arméniens)։

Այս առիթով մտածումս կ'երթայ ուրիշ օրումսն էր, երբ յուզիչ խանդավառութեան մը մէջ գտայ Կոստան Զարեանը, Պէյրութի իր բնակարանին մէջ, խանդավառութիւն մը, որուն պատճառը իր ձեռքերուն մէջ բարձր կը պահէր — Հայկական Հին Մանրանկարչութիւն։ «Հաւաքեցի համայնարանի (Պէյրութի ամերիկեան) բրոֆէսէօրներին և էջ առ էջ ցոյց տուցի նրանց հայ մանրանկարչութիւնը — հին, բայց յանգուզն, ներկայ նկարչներէն շատ աւելի յանդուպն...»։

Եւ իսկապէս որ իբրև հատոր Օննիկ Աւետիսեանի «Peintres et Sculpteurs Arméniens»-ը կրկնապէս անհերքելիութեան բազմաթիւ Հայկական Հին Մանրանկարչութիւն հոյակապ հաստիքի կողքին, նոյն dignité-ով, չքեղ մատենագրաններուն մէջ արուեստի սիրահարներուն։

Մեծ առաւելութիւն մտնաւանդ, որ առաջինը, բացատրուած ուսերէն և հայերէն լեզուներով, կը Ֆիայ Նուզդ մատչելի եւրոպական հետաքրքրութեան։

Բաւական տանէն ի վեր չէինք ունեցած եւրոպացիներուն հրամցուելիք այսքան

չքեղ տպագրութիւն։ Կը մտածեմ Roseraie d'Arménie-ին և կը հարցնեմ. Կա՞յ լաւագոյն պաշտպան մեր դատին և հայ անցեալն ու ներկան լաւագոյնս ներկայացնող գեպան՝ լոյսի, գիտութեան և արուեստ-ներու մայրաքաղաքներուն մէջ, քան այս մէկը, որուն ճաշակաւի լոկ կը շողայ բարձրագոյն արուեստի ժողովուրդ մը ըլլալու մեր գլխաւոր յատկութիւնը։

Մեր խանդավառութեան մէջ մոռցանք յիշելու գիրքին հրատարակութեան պարագաները, տեղը, լեզուն, և այլն։ Որովհետև անհրաժեշտ է նշել թէ Օննիկ Աւետիսեանի «Peintres et Sculpteurs Arméniens» գործը հրատարակուած է Գահրէթի մէջ, 1960ին, «Հայ Մշակոյթի Բարեկամներու» կողմէ, 500 է աւելի նկարներով, որոնցմէ քսանը՝ գունաւոր, առաջնակարգ փայլուն թուղթի վրայ, մեծածաւալ, լաթակաղմ, հազար երկու հարիւր տպաքանակով, հինգ հարիւր էջերէ բաղկացած, զնահատական Յառաջաբանով մը՝ Արար Միացեալ Հանրապետութեան՝ Եգիպտոսի Կրթական Նախարարին կողմէ։

Գիրքը՝ իր տեսակին մէջ հրատարակուած առաջին գործն է Ֆրանսերէն լեզուով և որքան գլխունք նաև հայերէն լեզուով։

Տեսարանութիւն մը չէ՞ և ոչ ալ տեսարանական քննադատութիւն մը հայկական արուեստին. չունի՞ յաւանդութիւնը André Malraux-ի հրատարակութիւններուն, սակայն հաստատուն և լարջ պատրաստութեամբ ներկայացուած պատմական տեսութիւն մըն է հայ նկարչութեան և քանդակագործութեան ժԹ. դարէն սկսեալ, տեսութիւն մը սակայն, հրամցուած պատաստին վրայ հայկական հին մանրանկարչութեան և քանդակագործութեան։ Գնահատումի գործ մը ըլլալէ աւելի՞ պատմական գործ մըն է։

Գիրքին առաջին այս մասը որ կը կազմէ արդի նկարչութեան և քանդակագործութեան տեսակ մը back-ground-ը կը գրաւէ հարիւրէ աւելի էջեր, ուր ներկայացուած է կարեւորը՝ մեր ձեռագրական հաւաքածոներու և ճարտարապետական կոթողներու մասին, անուշտ անոնց բերած նպատակը նկարչութեան և քանդակագործութեան։ Ուշագրաւ է նկարներու յաջող ընտրութիւնը, անտարակուսելիօրէն կատարուած

պատկերելու համար ոչ միայն հարստութիւնը, այլև զանազանութիւնը նկարագրուած գործերուն: Նոյնքան յաջողութեամբ որ հղած է ընտանեկանը մէջընտանեկանը, որովհետև, ի պատիւ հեղինակին, պէտք է ընդունել որ զօնարը և ազիրախտ գործ է հայ արուեստի մասին մինչև այսօր եղած վկայութիւններուն մէջէն ընտրել այն հակիրճ բայց ցցուն տողերը, որոնք քանի մը նախադասութեան մէջ յաջողած են ամփոփել հայ արուեստի բազմազոյն յատկութիւնները և զետեղել զայն արուեստի պատմութեան ընթացքին մէջ:

Արդի ժամանակներու նկարչական գործերու և նկարչներու շարքը կը բացուի Հայաստանի թանգարանով: Մօտ վաթսուէջերու մէջ շարուած կը գտնենք անուններ և նկարներ Թրֆիլիսի և Մոսկուայի գաղութներէ մինչև այսօրուան Երևանի երկուստեքնու գործը:

Բացի մեծ անուններէն՝ (Ալլադովսքի, Բաշլիշանեան . . .) հոն կը գտնենք շատ ուշագրաւ և ուժեղ գործեր, երիտասարդ ստորագրութիւններով՝ ինչպէս Ալամազեան, Սիրապեան, Աբեղեան, Սրբան քաղցր պիտի թուէր մեզի աւելի երկար շարք մը էջերու, ուր կարենայինք ծանօթանալ նաև նոր անուններու, որոնք արդէն իսկ հասած են հոչակի՝ ինչպէս Արարհամեան, Խաչիկ Ստայեան, Խանջեան, ևլն., որոնց անուններու յիշատակութեամբ կը բաւականանայ հեղինակը:

Ապա կը բացուի արտասահմանը, իր անտահման զանազանութեամբը ներշնչումներու և ոճերու, աճած այնքան տարբեր միջավայրերու մէջ, սակայն, մօտէն դիտուած, այնքան նման իրարու իրենց ներքին խառնուածքով, կը տարուինք ըսելու՝ իրենց հայկականութեամբ:

Հաս կան ծանօթներ և անծանօթներ, հայկական անուններ և վարձու անուններ կրող հայ արուեստագէտներ, Խորաբ Շահին և Հանրի Հերոյ, Գարգու (սքանչելի կարմիրով վերարտադրուած նկարով մը) և Մուրաֆեան, բոլորն ալ Փարիզի atelier-ներէն, որոնց կը պարտինք անտարակոյտ դարձնուած աշխարհահռչակ անուններու:

Յետոյ Խառլիան, ուր կը փայլի Զիլթեանը:

Յաջորդն է Եղիպտոսը. Տիրան Կարապետեանի absraït ծագիկներու փունջերով և զրծիներու ու բարակ գոյներու նազանքով, Օննիկ Աւետիսեանը, արգիթական շարժումներու մէջ արձանացած զատականութեամբ, Աշոտ Զօրեանը իր տպագրապաշտութեամբ, Կոճաճանեանը՝ իր տխրութեամբ, և տապալիս երկար շարք մը խնամումի գործերու, որոնք տեսակ մը շարունակութիւնն են կարծէք Ֆրանսայի հայ նկարչութեան, եթէ ներուր ընդհանուր ակնարկի մը մէջ համագրել այսքան զանազանութիւն:

Ամերիկան՝ իսկապէս նոր աշխարհ մըն է հայ նկարչներու, որոնց, յաճախ, անուններուն և անոնց մեծութեան միայն ծանօթ էինք: Սոյն զիրքով, յստակ պատկերացում մը ունինք այժմ Յովսէփ Փուշմանի արեւաբարոյր հանդարտութեան և Ալիկ Վորքի ձեռնու խառնիճազանութեան մասին և Զօրթեանի ու Կոլոյիանի ուժեղ գլածերը յիշեցնող յայտնութեանակա compositionներու մասին:

Թուրքիոյ հայ նկարչներու գործերէն ոչ մէկ վերարտադրութիւն:

Պարսկաստանի համար՝ երկու անուններ, երկուքն ալ պարսկական ոճի և մանրանկարչութեան ազդեցութեան տակ:

Քանի մը էջեր ծաղկակալչական արուեստի մասին և 425րդ էջը կը բանայ շարքը քանդակագործներու, Հայաստանի և սփիւքի մեծ և ծանօթ անուններու շարքով, ներկայացուած իւրաքանչիւրը իր կենսագրականով, ինչպէս եղած էր նախորդ էջերուն մէջ՝ նկարչներու մասին, օտար մամուլի և արուեստի քննադատներու վկայութիւններով և, վերջապէս, նկարչական վերարտադրութեամբը գլխաւոր գործերուն:

Եւ գիրքը կը փակուի — հայրէ ճակատագիր, իրտի ըսինք — քանդակագործուհի մը անունով (Մարի Կէրէքմէզեան) որ, իր բացարձակ տաղանդին ազալին ծաղկաները տուած, հիւանդութեան մը զոհ դացած է տակաւին 34 տարեկանին:

Այս բոլորը՝ ներկայացուած է պարզ և յստակ ֆրանսերէնով մը, արուեստագէտի յստակատեսութեամբ և գրագէտի ներքաւտութեամբ:

Կը շնորհաւորենք Օննիկ Աւետիսեանը:

“ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ
ՀԱՄԵՄՏԱՌԻԹԵԱՄԲ 562 ԼԵԶՈՒՆԵՐԻ”

Ն Ե Ր Ա Մ Ծ Ո Ւ Թ Ի Ն

ՀՐԱՋԱՆԻՍ ԱՃԱՌՈՒՄ — ԵՐԵՎԱՆ — 1955, էջ 655

ԺԱ. — Գերմանական ճիւղ. — Հնդեւրոպական ամբողջ ցեղի մէջ ամենէն զարմանալին գերմանականն է՝ իր յարափոփոխ բախտով: Յոյներէն, լատիներէն և նոյնիսկ կիլտերէն աւելի ուշ մտան անոնք պատմութեան մէջ, Նախապատմական շրջանին անոնք գրաւեցին Ալանտինալիոյ հարաւը, ուրկէ Գ. դարուն, իշան դէպի Սև ծով և Դանուբի ու Տնիսիայի միջև հիմնեցին թագաւորութիւն մը, որ շուտով երկուքի բաժնուցեցաւ, — Օստգոթ և Վիսիգոթ: Տրդ դարուն, բարբարոսներու արշաւանքէն, անոնք գաղթեցին դէպի հարաւ — արեւելք և արեւուտք: Վիսիգոթները արշաւեցին Թրակիա, Յունաստան, Իտալիա և տիրացան ամբողջ Ալպաիոյ և Դադլիոյ մեծ մասին: Վաստալները գրաւեցին Աֆրիկէն, Միջերկրականի կղզիները՝ Սիկիլիան, Սարդինիան, Դորսիզան և Իտալիան: Օստգոթները նուաճեցին Իտալիան, Իլլիրիան, Պանոնիան, Աւստրիան և հիմնեցին մեծ կալսրութիւն մը: Պուրկոնտացիները հիմնեցին իրենց պետութիւնը Գաղղիոյ և Հելլոցիոյ սահմանին մէջ, Վիսիգոթներու մէջ ուրիշ ճիւղը նուաճեց Հարաւային Ռուսաստանը և իրիմը: Միւս կողմէն, սաքսոնները գրաւեցին Բրի-

տանիան և գերմանական այլ ցեղեր բռնեցին ամբողջ Հիւսիսային Եւրոպան: Այսպէսով, անգլին տարածութիւն մը՝ Իսլանտայէն մինչև իրիմ և Աֆրիկէն մինչև Ալանտինալիոյ ծայրը բռնուած էին գերմանական ցեղերով և լեզուներով: Բայց այս զօրութիւնը շատ վաղանցուկ եղաւ: Զ. դարուն, Յունտինիանոս կայսրը Բիլիսարիոսի և Ներոնի հայ զօրավարի ձեռքով վերջ տուաւ գերմանական աշխարհակալութեան: Աֆրիկէի վանտալները, Ալանտիոյ վիսիգոթները և Իտալիոյ օստգոթները նուաճուեցան և անոնք բոլոր տիրապետութիւնները անցան բիւզանդացիներուն ձեռք: Սմէն տեղ, ուր որ գերմանները հասած էին, կը ջնջուին և անոնց լեզուները անհետ կը կորսուին: Մինչև իսկ իրիմի մէջ, ուր յոթերը մինչև 18րդ դար իրենց ազդութիւնը և լեզուն պահած էին՝ կը ջնջուին: Գերման ցեղերը կը միան և կ'անկն միայն Հիւսիսային Եւրոպայի մէջ, Ալանտինալիա և մինչև Իսլանտա: Տես J. Carcopino, Revue Celtique, XXXVIII, էջ 319; E. Norden, Sitzungsberichte der pr. Akad. der Wissensch., Phil. - Hist. klass., L. 1918, էջ 95-138; Նոյնէն՝ Die germanische Urgeschichte in Tacitus Germania, p. 351; R. Much, Der Name der Germanen, Vienne, 1920 և Festschr. Hirt, II, էջ 507-531:

Գերմանական ճիւղի լեզուները կը բաժնուին երեք խումբերու: —

Ա. — Արեւմտեան գերմանեքե, որ կը պառուակէ հետեւեալ լեզուները: —

1. — Գերմանեքե. կը կոչուի նաեւ բարձր գերմանեքե: Հնչարանութեան տեսակէտէն կը զանազանուին ինի բարձր գերմանեքեք, միջին բարձր գերմանեքեք և ճոր բարձր գերմանեքեք: Հին գերմանեքենը սկսած է գրի առնուիլ Տրդ դարէն և կ'երկարի մինչև 11րդ դար, բայց մեզի հասած բնագիրներէն իւրաքանչիւրը կը ներկայացնէ առանձին բարբառ մը: Լեզուի միութիւն չկայ: Գերմանեքէն բարբառներու մէջ նշանաւոր է Քրիստոնեաները, որու վրայ հիմնուած է նոր գերմանեքենը, որ արդի Գերմանիոյ և Աւստրիոյ լեզուն է: Տես O. Behagel, Geschichte der deutschen Sprache, Տրդ հրատ., Berlin, 1928; Նոյնէն՝ Die deutsche Sprache, Vienne-Leipzig, 7րդ հրատ., 1923; E. Tonnelet, Histoire de la langue allemande, Paris, 1927:

Եւ կը շնորհաւորենք ճիշդագոյն պատմական Գաղղիոյ որ զօրավար կանգնեցաւ աշայ Մշակոյթի Բարեկամներու ամէն գնահատանքէ վեր այս ձեռնարկին, ինչպէս կ'երևի գլխիկի սկիզբը տպուած ցանկէն, ուր հաճոյքով կը կարդանք իրենց բազմաթիւ բարեբարութիւններով Ազգին և մեր Աթոռին երախտագիտութեան արժանուցած անուններ:

Շ. Վ.

Գերմաներենի բարբառ մին է հրէական ժարկոն՝ Իտիշը, որ կազմուած է գերմաներէնէ և քաղմաթիւ հրէական փոխառութիւններէ, Իտիշը ունի երկու բարբառներ՝ u. և o., որոնց տարբերութիւնը միայն ձայնաւորներու մէջ կը կայանայ: Բաղաձայնները, բառական մթիւրը և մասնաւորապէս քերականութիւնը շատ աննշան տարբերութիւն մը կը ներկայացնեն: Ս. բարբառը ունի ai և äi ենթաբարբառները: Տես A. Landau, Deutsche Mundarten հանդէսի մէջ. I, 1896, էջ 126; H. Loewe, Die Sprachen der Juden, Cologne, 1911; M. Mieses, Die Entstehungsursache der jüdischen Dialekte, Vienne, 1915; E. Lévy, MSL., XVIII, էջ 317:

2. — Ստրիկ գերմաներէն. կը կոչուի նաեւ հին սաքսոներէն, որու հնագոյն մնացորդն է Heliland քերթուածը, 830 թուականներէն. կան նաեւ աւելի ուշ շրջանէ գրական կտորներ: Ներկայիս կը խօսուի ամբողջ գերմանական գաղտնավայրին մէջ, Հռետնայէն դէպի արևելք. իրեն պաշտօնական լեզու, կը ներկայանայ ան հոլանդերէնի և ֆլամաներէնի ձևին տակ: Տես H. Grimme, Die plattdeutschen Mundarten, 2րդ հրատ., Berlin, 1922; Jan te Winkel, Geschichte der niederländischen Sprache, Grundriss der germ. Philologieի մէջ, 2րդ հրատ., I, էջ 781–925 (1901):

3. — Անգլիերէն. անկլո-սաքսոներու արշաւանքով մտաւ Մեծն Բրիտանիա և Սկոթլանդ, արտաքսելով կելտական լեզուն և տիրապետեց այնտեղ: Աւանդուած է 8րդ դարէն: Այս շրջանի լեզուն սովորաբար կը կոչուի հին անգլիերէն կամ անկլո-սաքսոներէն, որ տեղեց մինչև 11րդ դարու վերջը, և անոր յաջորդեց միջին անգլիերէնը: Անգլիերէն ունի քաղմաթիւ փոխառութիւններ գերմանական, կելտական ձիւղերէն, ինչպէս և իտալերէնէն, իսկ ամենէն աւելի ազդուած է դանիերէնէն և ֆրանսերէնէն: Ասոնց վրայ եթէ աւելցնենք գիտական յունական բառերը, վերահասու կ'ըլլանք որ, ան իր բառապաշարով, հնգերոպական լեզուներու մեծ խառնուրդ մը կը ներկայացնէ: Ոմանք կը կարծեն թէ անգլիերէնը գերմաներէնի զաւակն է. բացարձակապէս սխալ է այս կարծիքը: Անգլիերէնը և գեր-

մաներէնը երկու եղբայրներ են, երկուքն ալ հարազատ գաւառները միեւնոյն մօր, որմէ բաժնուած են 5րդ դարուն և աճած՝ առանձին առանձին: Տես O. Jaspersen, Growth and structure of the English Language, Գրգ հրատ., Leipzig, 1938; Դոյնէն՝ A modern English grammar on historical principles, Heidelberg–Copenhagen, 1909–1942; H. C. Wyld, A short history of English, 3րդ հրատ., Londres, 1927:

Աճառեան չի մահաբաժաներ Ամերիկայի մէջ կերպարարուած անգլերէնին նկարագիրը. արգարե, այս անկլո-սաքսիկները կը չեզիրուն անգլիերէնէն իր հնչարանութեամբ և բառապաշարով. ան կը ցուցարկէ բառային ստեղծագործման զգալի ճոխութիւն մը և իր խօսակցական ձևին ներքեւ, բարբառային տարբերութիւններ կը յայտնաբերէ Միացեալ Նահանգներու զանազան շրջաններուն մէջ: Աճառեան չի յիշատակեր նաեւ անգլիերէնի և կարգ մը քնիկ լեզուներու միացումով կազմուած խառնուրդի լեզուները. ինչպէս Մայրագոյն Արևելքի Pidgin–Englishը, Sierra Leoneի broken englishը և Բոլիբեկոյ Beach–la–mar (Bichelamare, Bêche–de–mer, Biche–de–mer, անյայտ է այս բառին ծագումը) կամ Sandalwood անգլիերէնը: Սպանիոյ Almeria, Malaga և La Linea նաւահանգիստներուն մէջ ծնունդ առած է նաեւ խառնածին անգլիերէն մը՝ Ingles de escalerilla յորըջրումով: Տես G. H. Krapp, The English Language in America, New–York, 1925; H. L. Mencken, The American Language, 4րդ հրատ., New York, 1936, First Supplement, 1945.

4. — Ֆրիզերէն. կը խօսուի Հոլանտայի հիւսիսային գաւառներուն մէջ: Տես Th. Siebs, Geschichte der friesischen Sprache, Grund. der germ. Phil.ի մէջ, 2րդ հրատ., I, էջ 1152–1464; W. Steller, Abriss der altfriesischen Grammatik, Halle, 1928:

Բ. — Հիւսիսային գերմանական, որու հնագոյն ներկայացուցիչն է հին հիւսիսային կոչուած լեզուն: Այս լեզուն կը խօսուէր Հիւսիսային Ներոպայի՝ Սկանինավիայի, իսլանտայի և կրօնիստայի մէջ, երբ այս երկրները և ժողովուրդները մէկ միութիւն կը կազմէին: Աւանդուած է մեզի խումբ մը սուրճական արձանագրու-

թիւններով, որոնք բոլոր միւս գերմանական յիշատակարաններէն ննագոյններն են: Ասոնք թիւով 100 էն աւելի են և գտնուած են Շուէտի, Նորվեկիոյ և Տանիաբարքայի մէջ: Հնագոյնները 500՝ թուականէն կամ քիչ մը աւելի հին են, սմանք ալ կը համարուին Գ. դարէն և կը հասնին մինչև 700 թուականը կամ 8րդ դար: Թուականայնությունը ունի 24 տառեր և կը գործածուէր մինչև 1150 թուականը, որմէ վերջ կտաւ լատինական այբուրենի գործածութիւնը: Այնուհետև սուներէն տառերը մնացին իբրև արձանագրութեան տառեր, Նորվեկիոյ մէջ մինչև 14րդ դարու վերջը, իսկ Հոլանտայի մէջ մինչև 18րդ դար: Տես L. Winmer, Die Runenschrift, Berlin, 1887; S. Bugge, Norges Indskrifter med de aeldre Runer, Inledning; Runeskriftens oprindelse og aeldste Historie, Christiania, 1905-1913; M. Cohen, M. S. L., XXIII, էջ 1:

11րդ դարուն, 1000 թուականէն սկսելով, ուսներէնի միութիւնը արդէն քայքայուած էր. անկէ վարդանալով, առանձնացան հետեւեալ չորս լեզուները. —

1) Իսլանտերէն, որ կը խօսուի այժմ Իսլանտայի մէջ և Եւրոպայի ամենահեռւոր հիւսիսային լեզուն է: Հին իսլանտերէնը աւանդուած է մեզի ձեռագրներու շնորհիւ 12րդ դարէն և շատ անգամ կը յիշուի լեզուաբանութեան մէջ: Իսլանտացիներու նշանաւոր գրական երկն է Էդդաները, որոնք գրուած են 11րդ դարուն:

2) Նորվեկերէն, որ կը խօսուի Նորվեկիոյ մէջ. շատ մօտ է իսլանտերէնին և անոր մէկ բարբառը կը համարուի. ծանօթ է գրեթէ ոոյն ժամանակէն:

Նորվեկիան նուաճածեցաւ և դանիական նահանգ մը դարձաւ 1380 թուականին: Դանիերէնը դարձաւ Նորվեկիոյ պետական լեզուն: Մէկ կողմէն Դանիոյ պետական պաշտօնականներու ներկայութիւնը և քաղաքներու ազնուականութեան օտարասէր ձգտումները, իսկ միւս կողմէն դանիերէնի և Նորվեկերէնի չափազանց նմանութիւնը այնպէս ազդեցին որ կարճ ժամանակուան մէջ Նորվեկերէնը մեռաւ իբրև գրական լեզու միջին դարու վերջաւորութեան և անոր տեղը գրաւեց դանիական նորամուտ բարբառը՝ riksmalը: Դայց գրեզացիները

կը խօսէին միշտ իրենց նորվեկերէնով: Այսպէս, լեզուի երկուութիւն ստեղծուեցաւ երկրէն ներս. աղետականները և պաշտօնական անձերը կը գործածէին դանիերէնը և կը գրէին այդ լեզուով, իսկ ժողովուրդը կը խօսէր և կը գրէր Նորվեկերէն: Aasen համեմատելով ժողովրդական բարբառները, կը կազմէ անոնց վրայ հիմնուած նոր ազգային գրական լեզու մը, որ հին Նորվեկերէնը չէր: Այս լեզուն կը կոչուի landsmaal և Իպսէնի ու Պյորնսոնի լեզուն է: 1918ին սկսեալ կազմել այս լեզուի բառարանը: Այս լեզուն երկրի խօսակցական լեզուն չէ, այլ միայն գրական, զոր Նորվեկերէնները կը ջանան դպրոցի միջոցով խօսակցական դարձնել:

3) Շուէտերէն, որ կը խօսուի Շուէտի մէջ. մօտիկ է Նորվեկերէնին, որուն շատ կը նմանի ձևով:

4) Դանիերէն, որ կը խօսուի Դանիոյ և իր զանազան գաղութներուն մէջ. շատ կը նմանի շուէտերէնին: Դանիերէնէն տարբեր բարբառ մըն է Ֆերոյերէնը, որ կը խօսուի Ֆերոյէ կղզիին մէջ: Տես A. Noreen, Geschichte der nordischen Sprache, 3րդ հրատ., 1913, Grundriss der german. Philologieի մէջ, V. Dallerup, Det danske Sprogs Historie, 2րդ հրատ., Copenhagen, 1921:

Գ. — Արեւելեան գերմանական խումբ: Այս խումբին մէջ կը մտնեն վանտայները, պուրկոնտացիները և կոթերը: Վերջիններէն ունինք կոթերէն լեզուն, որ յայտնի է մեզի Ս. Գրքի Թարգմանութեամբ, կատարուած 4րդ դարուն, Վուլֆրիսս եպիսկոպոսի ձեռքով: Բաալիոյ մէջ, 6րդ դարուն, այդ լեզուով գրուած են քանի մը վաներագրեր: Խորիմ կոթական լեզուն կը մնան միայն 60 բառ, զորս 16րդ դարուն Բուսքիկ անունով հոլանտացի մը հաւաքած է: Տես W. Streitberg, Gotisches Elementarbuch, 5րդ հրատ., Heidelberg, 1920; M. H. Yellinek, Gesch. der Got. Sprache, Berlin, 1926; F. Mossé, Manuel de la langue gotique, Paris, 1942: Տես A. Meillet և M. Cohen, L. M., էջ 77-79.

ԺԲ. — Կելտական ճիւղ: — Այս ճիւղի լեզուները առանձնապէս նման են լատինականին և մասամբ ալ գերմանականին,

որմէ կը հետեւի, թէ կելտերը կը բնակէին նախապէս այս երկու ճիւղերու հարեալ նութեան մէջ, այսինքն արդի Պոհնմիոյ կամ Գիրմանիոյ սահմաններուն մէջ, կալիքի է ըսել, նոյնիսկ, որ հնդեւրոպական հայրենիքէն դուրս, կելտական և իտալական ճիւղերը միասին մէկ միութիւն կազմած են՝ իտալո-կելտական ճիւղ, որ յետոյ բաժնուած է երկուքի։ Կելտերը տարածուեցան դէպի արեւմուտք, հիւսիս և հարաւ, Եւրոպայի ամբողջ տարածութեան վրայ։ Նախ մասն Գիրմանիա, Ն. Ք. 4րդ դարուն արշաւեցին դէպի Պալքանները, Թրակիա և Մակեդոնիա, մինչև անգամ անցան Փոքր-Ասիա, ուր հիմնեցին Գաղատիոյ թագաւորութիւնը։ Դանուր և Հոննոս գետերու անունները կելտական բառեր են։ Հռոմայեցիներու շրջանին կելտերը հիւսիսային Իտալիայով անցան Գաղղիա, Սպանիա և Բրիտանիա։ Այսպէսով, Սկոտլանդի հիւսիսային ծայրէն մինչև Փորթուկալի հարաւային ծայրը բռնած էին։ Բայց, կելտերը ուր որ ալ գացին, արագութեամբ ջնջուեցան, մեծագոյն մասը լատինացաւ և այսօր անոնց թիւը երեք միլիոնէն քիչ մը աւելի է, ուրուն մէկ միլիոնը Ուելշի մէջ, քիչ մը աւելի Ֆրանսայի Պրեթանը քաղաքին, կէս միլիոնը Իրլանտայի մէջ, անացեալը Սկոտլանդի մէջ կը բնակի, բայց բոլորն ալ երկլեզու են, կը խօսին միաժամանակ անգլերէն և ֆրանսերէն։

Կելտերու ամենաուժեղ ներկայացուցիչը կը մնայ Իրլանտան, որ Առաջին համաշխարհային պատերազմէն յետոյ ինքնավարութիւն ստացաւ և ձեռք բերաւ լեզուի յարատեւութեան գրաւական։ Թէն բնակչութեան 9 տոկոսը միայն Իրլանտերէն զրտէ, բայց իրլանտացիները սոցիալական ամենաբուռն ազգասիրութեամբ, կ'աշխատին դրպորոցի, գրականութեան և պետութեան միջոցաւ կենդանացնել մեռեալ իրլանտերէնը և զայն ընդհանուր լեզու դարձնել բոլորն ալ Իրլանտայի մէջ, ջնջուով նոյնիսկ Իրլանտական բարբառները։

Կելտական խումբը կը բաժնուի երեք ճիւղերու.

Ա. — Կալլերէն, որ հին կելտերէնն է. այս լեզուէն մեծ ժառանգութիւն մը չկայ. կան միայն զանազան յատուկ անուններ,

որոնք պահուած են յոյն և լատին հեղինակներու մօտ, և մօտաւորապէս 50 արձանագրութիւններ՝ որոնք գտնուած են Ֆրանսայի մէջ, Հոն գտնուած են նաև խումբ մը խեցեղէններ, որոնց վրայ գրուած էին կալիական 1-10 դասական թուականները (Ա. Գարէն)։ Այս բոլորը գաղափար կու տան միգրի կելտական լեզուի խրթնարտութեան մասին, որ բաւական հնաժիճակ է, բայց ոչ մէկ տեղեկութիւն կու տան ձևարարութեան և շարահիւսութեան մասին, որովհետեւ մութ և սակաւաթիւ են։ Տես H. Pedersen, *Vergl. Gramm. der Keltischen Sprachen*, Göttingen, 1908-1912; զանազան հեղինակներու կողմէ յօդուածներ՝ Irish, Gaelic, Brythonic, Goidelic, Manx ներթերու մասին՝ *The Encyclopaedia Britannica* մէջ, 14րդ հրատ., 1929.

Բ. — Բրիտանական, Մեծն Բրիտանիոյ լեզուն, որ անգլերէնի միջոցաւ մտարուեցաւ՝ կը պարուենակէ հետեւել լեզուները.

1. — Կիլերէն կամ Ուելշերէն. Ուելշ գաւառի լեզուն է և աւանդուած է 8րդ դարէն, բաւական հարուստ բանաստեղծական գրականութեամբ մը։ Տես J. Morris Jones, *A Welsh Grammar historical and Comparative*, I, Oxford, 1913 (J. Loth, *Rev. celt.*, հատոր 36 և 37); O. Fynes-Clinton, *The Welsh Vocabulary of the Bangor District*, Oxford, 1913; A. Sommerfelt, *Studies in Cyfeiliog Welsh*, Oslo, 1925:

2. — Գոմերէն. կը խօսուի Անգլիոյ հարաւարեւմտեան ծայրը՝ Գոմերէն գաւառին մէջ. աւանդուած է միգրի 13րդ դարէն՝ բառացանկով և 15րդ դարէն՝ քանի մը բնագիրներով. անհետացաւ 18րդ դարուն։

ԱՆՈՒՇՈՒՄԱՆ ՎՊԴ. ՋԼՋԱՆԵԱՆ
(Շարունակելի՝ 13)



ՄԻ ՓՈՐՁ «ԳԻՐԳ ԹՂԹՈՅ»Ի ԹԵՐԻ ՄԱՍԵՐԻ

ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

«Գիրք բոլորը Հայոց Հայրապետանցին մէջ սկսած պաշտօնական հաւաքածոյ մըն է»:

ՍԱՂԱՔԻԱ ԱՐԲԵՊՈՍԿ ՕՐՄԱՆԵԱՆ

Հայ մատենագրութեան մէջ «Գիրք թղթոց»ը մէկն է մեծ հոգակ վայելող այն երեք ժողովածուներից (սփրք թղթոց, «Կնիք հաւատոյ», «Կանոնագրութեան», սրտեք սկիզբ են առել Ե-է դարերում⁽¹⁾).

Այս ժողովածուներից երկուսը, այն է «Գիրք թղթոց»ը և «Կնիք հաւատոյ»ն, մեզ հասել են մէկական հազուագրւած ձեռագիր օրինակներով, մասնաւորապէս առաջինը իբրեւ արտագրւած 1298 թուականին Կիւլիկիայում:

Վերջինս մինչ 1871 թուականը գտնուում էր Հռոմում, ապա ճի Կոստանդնուպոլիս ... յՈրթաճէօյ, այսինքն Անտոնեան հայ կաթողիկ վանքում: Եւ ահա այստեղ Կոստանդնուպոլիսում, ձեռագիրը լրովին ընդօրինակուել է ու արտագրուել «Յովսէփ Իզմիրեանց» գրական յանձնաժողովին, որը և լոյս է ընծայել այն 1901 թուականին Թիֆլիսում, իբրեւ «Սահակ-Մեսրոպեան մատենադարան» շարքի Ե գիրք (տպարան Տ. Ռոստինեանցի և Մ. Շարաձէի, ԺԼ-4584 էջ):

Առաջին համալսարանային պատերազմի տարիներին «Գիրք թղթոց»ի ձեռագիրը, ի թիւս յիշեալ վանքի մատենադարանի այլ ձեռագրերի, փոխադրուել է Լիբանանի Զմմառի հայ կաթողիկ վանքը, ուր և գրտնւում է այժմ:

(1) Լ. Միխիսեք-Բեկ. «Վարդապետը հայոց հիւսիսային կողմանց», Թրիթի 1928, էջ 69 (վրացերէն). Նայնի «Հայոց Գիրք բոլորի նորոյայտ տարբերակը և Պետրոս Իվերացու աշակերտ Յովհան Մայրանցին», Վերաստանի պետական թանգարանի Տեղեկագիր, ԺԱ, Թրիթի, 1941, էջ 41-80 (վրացերէն, ռուսերէն ամփոփումով). Նայնի «Հայ հին գրականութեան պատմութիւնը», Թրիթի, 1941, էջ 63-66 (վրացերէն). Նայնի «Յոյն-բուզանդական հին հայոց թղթոց գրքում», «Բիւզանդական տարեգիր», ԺԲ, Մոսկուա-Լենինգրադ, 1957, էջ 263-269 (ռուսերէն):

«Գիրք թղթոց» ժողովածուի կազմութեան մասին հայ բանասիրութեան մէջ արտայայտուել են մի քանի կարծիքներ:

Ըստ Մաղաքիտ արքեպս. Օրմանեանի, «Գիրք թղթոց»ը Հայոց Հայրապետանցին մէջ սկսած պաշտօնական հաւաքածոյ մըն է, որ «հետդհետէ կազմուած է Դմիտր Կաթողիկոսարանին մէջ, իբրեւ դիւան Հայրապետանցի, և հետդհետէ բարգոյնեով իւր կանոնաւոր լրումը ստացած է Օմնեցիին ձեռքով, վասնզի անկէ ետքը եղած յաւելումները շատ անկանոն և կցկուռ են»⁽²⁾:

Ըստ Հ. Ներսէս վարդապետ Ակինեանի, «Գիրք թղթոց»ը Մովսէս եպիսկոպոս Յուրապաճուցու կազմածն է⁽³⁾, ըստ Ն. Ա. զոնցի՝ Կոմիտաս կաթողիկոսի⁽⁴⁾, իսկ Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեանը գրտնում էր, որ «Գիրք թղթոց»ի ... հիմնական մասը ... ամփոփուել է մի որոշ ժողովածուէ դարձել Կոմիտաս կաթողիկոսի ձեռքով կամ օրով⁽⁵⁾: Այս վերջին կարծիքի ենք և մենք:

«Գիրք թղթոց»ը, որն 98 դասանարանական թղթեր է պարունակում, շուրջ Ե-ԺԳ դարերի, բաղկացած է 3 հիմնական շերտերից:

Առաջին շերտը սկսում է զոյգ թղթերով, որոնց վերնագրերն են. ա. «Թուղթ Պրովկեայ եպիսկոպոսի առ սուրբ Սահակ հայրապետ Հայոց և առ սուրբ Մամբոց» և

(2) Մաղաքիտ արքեպիսկոպոս Օրմանեան, «Ազգապատմութեան», Ա, էջ 618:

(3) Հ. Ներսէս վրգ. Ակինեան, «Եկեղեցի կաթողիկոս վրաց», Վիեննա, 1910, էջ 37-44:

(4) Ն. Ազնց, «Ամպեղին եպիսկոպոս Բերունի (Հայոց «Գիրք թղթոց»ի բնութեան շուրջ)», «Բիւզանդական Արևելք», Բ, Պետերբուրգ, 1913, էջ 175-176 (ռուսերէն):

(5) Կարապետ եպիսկոպոս (Տէր-Մկրտչեան), «Կնիք հաւատոյ», էջմիածին, 1914, էջ XXV-XXVI:

բ. «Պատասխանի թղթոյն Պրոկլի երանելւոյ, ի Սահակայ եւ ի Մաշգոցէ, սուրբ վարդապետացն Հայոց» (էջ 1-13)։

Սրանց հետեւում են հայոց և յունաց, հայոց և ասորոց, հայոց և վրաց եկեղեցականներին ու մարմնաւոր իշխանութեան աստիճանաւորների միջև թղթակցութիւններ։ Ապա գալիս է «Տեառն Կոմիտասու Հայոց կաթողիկոսի» Վասն հաւատոյն գրուածքը (էջ 212-219), որից յետոյ մի դարու սահմաններում ժողովածուն ընդհատուած է։

Կոմիտաս կաթողիկոսի երկին կցուած է յիշատակարան հետեւել բովանդակութեանը (էջ 219)։

Աւերինակ գրոցս, որ լեւալ էր Տէր Գրիգորիս Վկայասիրի, մինչև ցայս վայր էր և նա այսպէս էր գրեալ. զՎահրամ որդի Գրիգորոյ Մագիստրոսի յիշեսցիք յաղաւթս ձեր, ո՞վ երջանիկ դասք ուղղափառաց խմբիցդ Աղբանաղեան սեռի, Շիէ (1078) թըւականին»։

Այս յիշատակարանով ապացուցուած է, որ «Գիրք թղթոց»ի նախնական խմբագրութիւնը հասնելիս է եղել մինչև է դարի սկիզբը, այսինքն մինչ Կոմիտաս կաթողիկոս (618-628)։

Այստեղից բխում է այն եզրակացութիւնը, որ այս նախնական խմբագրութիւնը ծանօթ է եղել Ժ դարի պատմիչ Ուխտանէս եպիսկոպոս Ուռայեցուն (Նքեսասցուն) իրբն «Պատմութիւն րաժանման Վրաց ի Հայոց» երկի հեղինակին, և օգտագործուել է ոււրիշների կողմից։

«Գիրք թղթոց»ի երկրորդ շերտը թէև սկսուած է «Յոհաննու Խմաստասիրի հայոց կաթողիկոսի» Սակս ժողովոյց, որ եղին ի Հայաս գրութեամբ (էջ 220-223), որը, անկասկած, Յովհան Օննեցու գրչին է պատկանում, սակայն մուծուած է ժողովածուի մէջ ոչ թէ գրութեան ժամանակին, այն է Ը դարի սկզբին, այլ ԺԱ դարից յետոյ, ընդգրկում է վաւերագրեր և երկեր Ը-ԺԱ դարերից։

Նման եղանակով է կազմուած նաև ժողովածուի երրորդ (վերջին) շերտը։

Ի դէպ, նշենք, որ այս վերջինը առանձնապէս աչքի է ընկնում Գրիգոր Նաբեկացու, Վարդանի, Վանականի և Սահակ

կաթողիկոսի գրչից ելած ու «Բանք խրատականք վասն հաւատոյն կոչուած երկերով», որոնք ամփոփուած են ժողովածուում ԺԻ դարում։

«Գիրք թղթոց»ը տպագրուելուց անմիջապէս յետոյ գրաւեց բանասէր-հայագէտների ուշադրութիւնը, որոնք այն ուսումնասիրելիս և հետազոտելիս այլևայլ մօտեցումով։

Այսպէս, օրինակ, Ե. Տէր-Մինասեանն օգտագործեց այն հայ-ասորական փոխյաւարաբերութիւնների պատմութեան շարագրման համար⁽⁶⁾, Իւ. Զաւաթշվիլին⁽⁷⁾ և Հ. Ն. Ակինեանը⁽⁸⁾ հայ-վրացական եկեղեցական պատակման խնդրի լուսարանութեան պատակով, Իոկ Ազնէս Ֆինկը, Նշնիկ Գեանջեցեանի հետ միասին⁽⁹⁾, ինչպէս և Ն. Ադոնցը⁽¹⁰⁾, տողերիս գրողը⁽¹¹⁾, վերջապէս Մ. Տալոնը⁽¹²⁾ և Վ. Ինկիլդեանը⁽¹³⁾ հայ-յունական (բիւզանդական) փոխյաւարաբերութեանց պատմութեան գծով։

* * *

«Գիրք թղթոց»ի 1901 թուականի հրա-

(6) Ե. Տէր-Մինասեան, «Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ», Էջմիածին, 1908. Նոյնը գերմաներէն, Լայպցիգ, 1904. Նոյնի «Նետադրականութիւնը Հայաստանում», «Գրական-բանասիրական հետախուզումներ», Ա. Սեւան, 1946, էջ 175-242։

(7) Ի. Ա. Ջալիլով, «Վրաց և Հայոց եկեղեցական պատակման պատմութիւնը է դարում», «Գայեթական Գիտութիւնների ակադեմիայի Տեղեկագիր», Մ. Գ. Բ., 1908, էջ 433-446, 511-536 (առանձնէն)։

(8) Հ. Նեմսու վրդ. Անիկեան, «Կիւրդի կաթողիկոս վրաց»։

(9) Ազնէս Ֆինկ և Ինկիլդեանցեան, «Փոստի թուղթը Աշոտի և վերջինիս պատասխանը», «Հանդէս հայագիտութեան», Բ, 1, Մարբուրգ, 1903, էջ 1-17 (գերմաներէն)։

(10) Ն. Ադոնց, «Ամպեղիսեպիսկոպոս Քերսեան»։

(11) Լ. Միլիսեթ-Լեկ, «Յոյն-բիւզանդական ...»։

(12) Մ. Տալոն, «Թղթոց գիրքը». ա. խումբ. «Յոյների հետ փոխ-յարաբերութեանց վկայող վաւերագրեր», ԿՍ. Յովսէփոսի համալսարանի Տեղեկագիր, Կատ. ԼԲ, պրակ Ա, Պէյրուս, 1955 («Քրականերէն»)։

(13) Վ. Ինկիլդեան, «Գիտութիւնների Գիրք թղթոց»ի Քրեաներէն թարգմանութեան լուսըջը, «Հանդէս ամսորայն», 1959 թ., էջ 228-240։

տարազանությունն նախաբանից տեղեկանում ենք, որ ժողովածուի աշխատակիցները ընդօրինակում են և առաջին բաղդատությունները հսկողը հղալ գլխաւորապէս Տ. Յովհաննէս աւագ քահանայ Մկրտիչին. տպագրութեան հոգը կատարեց Տ. Գրիգոր աւագ քահանայ Սարգսիսը, իսկ Տ. Բարսեղի ծայրագոյն վարդապետ Կիրիլէսէրեան (հետագայում Բարսեղի Ա. աթոռակից-կաթողիկոս Տանն Կիրիկոյ, 1931-1936, Լ. Մ.-Բ.) վերջին բաղդատությունը ըրաւ և կազմեց յատուկ անուանց և վրիպակներու ցանկը (էջ Ը)։

Նոյն նախաբանում նշուած է նաև, որ ձեռագրի սխալներուն թուականաւորը կը հասնի մինչև ԹԿԱ = 361, և երեսներուն թուականաւորը՝ մինչև 722, բայց միջանկեալ անճշգրտութիւններ և տարբերութիւններ կան, ինկած թերթերու պակասը նկատի առնուելէն կամ չառնուելէն յաւաքել կ'ուշ (էջ Ը-Թ)։

Ապա (էջ Թ-Ժ) մի առ մի յիշատակուած են ձեռագրի պահպանութեան մասերը։

Ընդ սմին, նշալած, որ 33 թուղթ ընկած են սկզբէն, որք նախադուռը, գուցէ և նախաբան մը կամ բովանդակութեան ցուցակը պարունակէին, . . . ապա առանձինքն վերջին բովանդակութիւնը ամբողջ է, որովհետև ճիշդ ու ճիշդ առաջին գրուածին մակագրութեան կը սկսի ձեռուերիս գտնուած հատորը (էջ Ժ)։

Երբ թղթոցի հրապարակումից մի տարի յետոյ պարզուեց, որ թէն սոյն վրայի մի ընտիր պատմական աղբիւր թերատ է հասել մեզ, սակայն հնարաւոր է սրբաբարձարտաբար այդ պակասը լրացնել . . . Մայր Աթոռի ձեռագրերից, Եւ ահա Կէդրգեան ձեռագրանի ուսանող Զ. Գրիգորեանին իր աւարտական շարագրութեան նիւթ է դարձնում այդ խնդիրը և ապա Աթարատա ամառակի էջերում հրատարակում իր հետազոտութեան արդիւնքները՝ Երբ թղթ թղթի պահանները և նրանից դուրս մնացած թղթերը վերնագրեր կրող յօդուածաւորով (1902 թ., էջ 560-569, 748-753)։

Սրանով պարզուեց, որ Երբ թղթոցի տիպի ձեռագիր, թէն մի փոքր տարբեր բովանդակութեամբ, եղի է և Մայր Աթոռի ձեռագրաց հաւաքածուի մէջ, Կէդրգեանի ցուցակով № 58-ի ներքոյ, որին վաղուց

ձեռք է հղել Մայր Աթոռի միաբաններ՝ Դատեան Ստեփան և Տէր-Մկրտչեան Կարապետ վարդապետները ու Գալուստ Տէր-Մկրտչեանը՝ Միաբանը (տե՛ս Աթարատի 1896, 1897 և 1900 թուականներին համարները)։

Չնայած այն հանգամանքին, որ Ն. Արդեանը մի փոքր թերագնահատում էր Երբ թղթոցի նշանակութիւնը, գտնելով, որ այն իբր թէ տղ մի նորութիւն չի պարունակում, քանի որ նրա մէջ մտած յօդուածները, հագուազուա բացառութեամբ, յայտնի էին ձեռագրաց այլ հաւաքածուներէ, բայց և այնպէս այն կարեւոր է հենց իբրեւ հաւաքական գործ, այնուամենայնիւ նա գրում էր, որ ապաստեղ մենք տեսնում ենք, թէ ո՞ր վաւերագրերն ու ո՞ր երկասիրութիւններն էին համարուած հայոց մէջ աւելի հեղինակաւոր և վճռական՝ եկեղեցական դաստիարակութեան բարձր խնդիրներին մեկնաբանութեան միջոցները⁽¹⁾։

* *

Վրաստանի պետական թանգարանի հայերէն ձեռագրերը ցուցակագրելիս, մօտ 20 տարի սրանից առաջ, մենք յայտնագործեցինք մի կարեւոր ձեռագիր, արտագրուած 1316 թուականին, որը մի տեսակ փորձ է Երբ թղթոց, «Կենք հաւատոյ» և «Կանոնագիրք» կոչուած հաւաքածուներէ միաձուլման։

Ձեռագիրը մեր ցուցակագրութեամբ կրում էր 20 համարը, որ հետագայում դարձաւ 130։

Ձեռագիրն ունի հետեւեալ 6 յիշատակաբանները.

ա) «Ձեռքուէս օտուանուն քահանայս զգրող գրոյս յիշխովք» յաղաւթս ձեռք (էջ 35բ)։

բ) «Ձեռագրեալ և զժողովս գրողս ընդ ներսէս և զձեռագրեալ իմ յիշխովք, աղաւթս, միայն Տէր ողորմ[ե] յայլ, և Աստուած զձեզ յիշեացէ ի յիւր միւս անգամ գալուստն» (էջ 69բ)։

գ) «Տէր Աստուած, ողորմես ներսիս և Մովսիսի և ծնողաց նոցին և զարմից և

(1) Ն. Արդեան, «Ապագայիս պահպանութեան», էջ 175։

յիշողացն և ամենայն հաւատացիւց Քրիստոսի մերոյ, ամէնէն (էջ 69բ)։

դ) «Ի թվին ՉԿԵ (1316) խնդիր եզև այսմ իրի» (էջ 70բ)⁽¹⁵⁾։

ե) «Ձրադմամեղ և զրիւր քանքարաց պարտականս զնեբրէս և ծնաւզոն իմ յիշեալ, ո՛վ հայր բարունի» (էջ 313բ)։

զ) «ՏԵՐ Աստուած, ողորմեա նեբրէսի և Մովսէսի և ծնաւզաց նորին և զորմից և որք յիշեն զմեզ ի բարի և քեզ յամենայնի, ամէնէն. և եղիցի, եղիցի ամէնէն» (էջ 330ա)⁽¹⁶⁾։

Ժողովածուն պարունակում է 45 յօդուած և երկասիրութիւն, որոնք են.

1. — «Յահաննու մի[աշխակե]ցի, աւուղի, աշակերտի Պետրոսի եպիսկոպոսի վերիացաց, [եթէ] անաւրէն և ամպարտաւան ժողովն Քաղկեդոնի ի բարկութենէն Աստուծոյ և ի թողլոյն ի ձեռաց [եղև և ոչ ի Հոգւոյն Սրբոյ, որպէս Նիկիայն, Կոստանդնուպոլսի և Եփեսոսին, Եւ վկայեն այսմ նախատեսութիւնք սրբոցն, որ եղեն յառաջ քան զժողովն և որ յետ այնորից (էջ 1ա—35ա)։

2. — «Թուղթ սիրոյ միաբանութեան մեծի կայսերն Կոստանդիանոսի և սուրբ պապուն Սեդրիստրոսի և Տրդատայ Հայոց արքայի և Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին» (էջ 36ա—66ա)։

3. — «Յաղագս ժողովոց» (էջ 66ա—69ա)։

4. — «Ամկս զաւատաց» (էջ 69ա—69բ)։

5. — «Աւրէնք պատուիրանաց Աստուծոյ մերոյ» (էջ 70ա—84բ)։

6. — «Վասն ասպարիզաց» (էջ 84բ—87ա)։

7. — «Վասն Աղամայ կենացն զբախտին» (էջ 87ա—94ա)։

8. — «Ամկս հերձուածողաց» (էջ 94բ—95բ)։

9. — «Յաղագս իշխանութեան» (էջ 95բ—96ա)։

⁽¹⁵⁾ Այս չորրորդ յիշատակարանը մտել է Լ. Խաչիկեանի «ԺԺ Գարի հայերէն ձեւագրերի յիշատակարաններ» գրքում (Երևան, 1950, էջ 126)։

⁽¹⁶⁾ Այս վեցերորդ յիշատակարանն ևս, թէև վերջը կրճատուած. տե՛ս նոյն տեղում։ Ի զէպ, նշենք, որ երկու ղեգքումն էլ Լ. Խաչիկեանի ուղարկութիւնից վրիպել է մեր համապատասխան աւանդման խնդիրը։

10. — «Վասն անապա[կ] բաժակին, յոր ոչ է պարտ ջուր խառնել ի սուրբ խորհուրդոցն» (էջ 96բ—102ա)։

11. — «Յաղագս բնութեան» (էջ 102բ—104բ)։

12. — «Ամկս առաքելոցն ձեռնադրուած» (էջ 105ա)։

13. — «Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին Հայոց» (էջ 105բ—106ա)։

14. — «Ի հարանց կանոնացն» (էջ 106ա—107բ)։

15. — «Ի Նիկիոյ կանոնացն» (էջ 107բ—108բ)։

16. — «Սրբոյն Գրիգորի առաքելոյ[ն] Հայոց» (էջ 108բ—110բ)։

17. — «Ի Սրբոյն Աթանասի կանոնացն» (էջ 110բ—111բ)։

18. — «Ի Սրբոյն Բարսղի կանոնացն» (էջ 111բ—114բ)։

19. — «Ի Սրբոյն Բարսղի կանոնացն» (էջ 114բ—118ա)։

20. — «Ի կանոնաց Ներսիսի կաթուղւոսի և Ներշապույն Մամիկոնէից եպիսկոպոսի» (էջ 118բ—119բ)։

21. — «Ի Կանկրայ կանոնաց» (էջ 119բ—121ա)։

22. — «Կանոնք Տեառն Եպիփանու» (էջ 121բ—122ա)։

23. — «Ի Սրբոյն Սահակայ կանոնացն» (էջ 122ա—123ա)։

24. — «Թովհաննու Մանգակուն[ւոյն]» (էջ 123ա—127ա)։

25. — «Եպիսկոպոսք Երուսաղէմի, որք յետոյ պատրիարկք» (էջ 127ա—127բ)։

26. — «Առաք ի թղպատութենէն» (էջ 127բ—128բ)։

27. — «Թովհաննու Մանգակունւոյ» (էջ 128բ—129բ)։

28. — «Սրբոյն Դիանիսիոսի Արիսպապապայ Թաղապ Աստուածածնին բան» (էջ 129բ—130ա)։

29. — «Կարնոյ կանոնք» (էջ 130ա—130բ)։

30. — «Մանուէլի» (էջ 130բ—131բ)։

31. — «Ներսիսի կաթուղւոյնի» Եղբարն Տէր Գրիգորի Հաջոց կաթուղիկոսի՝ Վասն ազգականութեան (էջ 131բ—140ա)։

32. — «Նորին Եղիկայ» (էջ 140ա—144ա)։

33. — «Ի դատաւանագրոցն սակաւին» (էջ 144բ—147բ)։

34. — «Աւրէնք աստուածադիրքի ձեռն
Մովսիսի յելից գրոց» (էջ 148ա-148բ)։

35. — «Վասն ծննդեան Փրկչին» (էջ
149ա-155ա)։

36. — «Վասն մտաց շարժման» (էջ
155ա-157բ)։

37. — «Յաղագս խնդութեան» (էջ 157բ
-160բ)։

38. — «Հարցումն Յարնադի և պատաս-
խանի Մովսէսի և Հայոց փիլիսոփայի» (էջ
161ա-165ա)։

39. — «Յաղագս հաւատոյ բան» (էջ
165ա-171բ)։

40. — «Սակա բարութեան» (էջ 171բ-
172բ)։

41. — «Բացայայտութիւն համաձայն
աստուածաբանութեան հոգելից հարցն սրբոց
ըստ առաքելասահման աւանդիցն Եկեղեց-
ւոյ Բրիտանոսի հանդերձ հաւատարանու-
թեամբ ճշմարիտ ուղղափառ դաւանութեան
Հայաստանեայց, ռոսացեալ Սրբոյ վարդա-
պետին Սահակայի կաթողիկոսի և մեծի
թարգմանչի՝ Ընդդէմ երկաբնակացն նե-
ստրականացն» (էջ 173ա-313բ)։

42. — [«Սակա գաւառաց»], համառօտ
(էջ 314ա). հմտ. № 4։

43. — «... կամաւք եկեալ» (էջ 314ա
-315բ)։

44. — «Ներսիսի՝ Տարսաւնացւոյ արքե-
պիսկոպոսի» (էջ 315բ-316բ)։

45. — «Յաղագս Արբոյն Գրիգորի» (էջ
317ա-329ա)։

ՊՐՈՑ. — ԴՈԿՏ. Լ. Մ. ՄԵԼՔԻՍԵՅ — ՌԷԿ
(Մնացեալը յաջորդիւ)

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

Ս. Է. ՈՒԱՅԹԵՔԸՐ

ՄԻԶՈՑԸ

ԵՒ

ՈԳԻՆ

Յետաքրքեմի Տիկեբեքի Մասիկ

Եւ

Փաստիկ Աստուծոյ Դոյուքի

ԳԼՈՒԽ Գ.

ՆՈՐ ՊԼԱՏՈՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՊԼԱՏՈՆԱԿԱՆ ՎԵՍԸ

Այսուհանդերձ, հազար տարիներու ըն-
թացքին, Դ. դարէն մինչեւ ԺԳ. դար, ջա-
տագովութեան ստորիկեան տիպը հինցաւ։
Այժմ պէտք է փնտռել այս երեւոյթին
պատճառը։

Եկեղեցւոյ յորդումը գետնափորներէն
դուրս՝ մղեց քրիստոնէութիւնը աւելի սեղմ
յարաբերութեան մը Յունա-Հռովմէական
աշխարհի փիլիսոփայութեան հետ, որ, այդ
ժամանակ, կը կրէր խոր յեղաշրջում մը։
Ստոյիկութիւնը դադրեցաւ ըլլալէ կենսու-
նակ ոյժ մը Բ. դարու վերջաւորութեան
եւ փոխարինուեցաւ Նոր-Պլատոնականու-
թեամբ՝ Գ. դարու ընթացքին. այս վերջինը
տիրեց առանց լուրջ մրցորդի մինչեւ հե-
թմասական դասակարգութեան վերջը։

Պատուելով հանդերձ Պլատոնը իբրեւ
գերագոյն ուսուցիչը, Նոր-Պլատոնական-
ները ամբողջացուցին անոր ուսուցումները
որդեգրելով ինչ որ նկատեցին արժէքաւոր
Արիստոտէլի եւ մասամբ Ստոյիկեան ուսու-
ցումէն, համադրելով միացեալ դրութեան
մը տակ ինչ որ կար լաւագոյն՝ յունական
մտածման մէջ. եւ այս բոլորը կը մատու-
ցանէին մարդկութեան արեւելեան խոր-



հրդապաշտ կրօններու ոգիով՝ իրբեւ փրկուած էին աւետիս մը՝ բոլոր հոգիներուն։

Այս Նոր-Պատանականութիւնը ամենէն տրամաբանական եւ յստակ կերպով բանաձեւուած է իր վերջին ներկայացուցիչ՝ Աթէնքի մէջ եւ զարուն վարդապետող Պրոկղի գրուածքներուն մէջ։ Պրոկղ, որ իր ժամանակի ամենէն բարձր մաթեմատիկոսն էր, Նոր-Պատանականութեան վարդապետութիւնները դասաւորեց երկու հարիւր տասներմէկ նախադասութիւններու շարքի մը մէջ, փաստուած եւկլիտէսի երկրաչափութեան հաւաքաբանական կերպով։ Հակառակ էպէս միտաիկ եւ մի քանի մութ մնացած կէտերուն, կարելի է բնիկ թէ որեւէ կրօնը չէ ներկայացուած այսքան յստակութեամբ։

Ստոյիկութենէ Նոր-Պատանականութիւն անցըր կարեւոր հետեւանքներ ունեցած մասնաւորաբար ընարանական աստուածաբանութեան վրայ։ Ստոյիկեանները, որեւէ դպրոցէ աւելի, ճանչցած էին օրէնքի տիրապետութիւնը բնութեան վրայ եւ միտ կարեւորութիւն ընծայած էին գիտական հետազոտութեան։ Մինչդեռ ընդհակառակը՝ Նոր-Պատանականութեան համար, նիւթական աշխարհը ամենէն ցած եւ վատ աստիճանն էր էականորէ դասաւորման մէջ եւ նիւթը՝ պատճառը եւ մարմնացումը չարին։ Ասոնց մեծագոյն ուսուցիչը՝ Պլոտին — ըստ իրեն աշակերտ՝ Պորփիրի տեղեկութեան — կը խպնէր մարմին ունենալուն համար։ Այն չափով որ ուշադրութիւն կ'ընէին ընական գիտութեան, անոնք կ'ընտելէին Արիստոտէլի։ Բայց անոնց փիլիսոփայական գերերկրային դրութիւնը, ուր ոչ մէկ պատմական դէպք կրնար իմաստ ստանալ, կ'արհամարհէր փորձառական ծանօթութիւնը եւ ամբողջ ուշադրութիւնը կը կեդրոնացնէր միակնի վրայ, գերազոյն եւ գեր-էական սկզբունք, եւ անոր ըզխումներուն վրայ։ Հետեւաբար, այս դրութիւնը մահուան կը դատապարտէր մաթեմատիկան, գրկելով գայն ամէն յարաբերութենէ փորձառական գիտութեան հետ եւ կը ստեղծէր մտաւորական միտություն մը, ուր ամէն գիտական հետազոտութիւն լքուած էր։ Հակառակ այս բոլորին, Նոր-Պատանականութիւնը միշտ ալ

զօրաւոր գրաւութիւն մը պահած է որոշ միտքերու համար. գտնուեցան, նոյնիսկ արդի ժամանակներու մէջ, փիլիսոփաներ, որոնք հրաժարեցան քրիստոնէական հաւատքէն, որու մէջ դաստիարակուած էին, եւ այս՝ ի նպաստ Նոր-Պատանականութեան։ Սակայն, առաջին դարերու ընդացքին, Պլոտինի եւ Պրոկղի փիլիսոփայութիւնը չեղաւ երբեք վտանգաւոր թշնամի մը քրիստոնէութեան, որ, հիմնուած պատմական յայտնութեան մը վրայ, նոյնքան հրապոյր ունէր փիլիսոփային որքան հասարակ մտրուոյն համար եւ աւելին՝ անհուն առաւելութիւնը ունէր ներկայացնելու աշխարհի չափանիշով հսկայ կազմակերպութիւն մը, անդամակցութեան յստակ պայմաններով։

Մինչդեռ, արտաքինէն դատելով՝ քրիստոնէութեան յաղթանակը կատարեալ էր, սակայն մտրուոյնութեան աւելի ուրիշ մարզին մէջ՝ յաղթութիւնը ամբողջական չէր ընաւ։ Նոր-Պատանականութիւնը խոշոր ազդեցութիւն գործեց քրիստոնէական փիլիսոփայութեան զարգացման վրայ եւ մասնաւորաբար փորձառական գիտութիւններու հանդէպ քրիստոնէութեան ունեցած դիրքաւորումին վրայ։ Եւ այս եղաւ երկու ձեւերով։

Նախ՝ Ս. Օգոստինոսի ազդեցութիւնը, որ «*homo universalis*» եւ «*Universalis*» գիրքերուն մէջ խոստովանած է Պլոտինի գրուածքներուն իրեն բերած օգնութիւնը՝ իր հոգեկան տագնապի ամենէն սուր վայրկեանին. անոնցմէ քաղած էր համոզումը, զոր պիտի փոխանցէր յաջորդող սերունդներուն, թէ ծանօթութեան միակ փափաքելի ձեւը Աստուծոյ եւ Հոգիի գիտութիւնն է եւ թէ որեւէ օգուտ չկայ ընտելեան հետազոտութենէն։

Երկրորդ պարագան կապուած է քրիստոնէական մտածողութեան ամենէն նշանաւոր դէպքին հետ՝ Զ. դարու սկիզբը, Պրոկղի անանուն հիացող մը գրեց մի քանի հատորներ եւ վերագրեց զանոնք Օլոլոս Առաքելի դարձի բերած Աթենացի Դիոնիսիոս Արիստակազիի հեղինակութեան, հատորներ որոնք կը պարունակէին էպէս Նոր-Պատանական փիլիսոփայութիւն մը, ներկուած քրիստոնէական եզրաբանութեան

մը խառով: Այս մաքսանենգութիւնը յաջողեցաւ եւ գրութիւնները ճանչցուեցան բոլորն ալ իրիւս վաւերական: Գրեթէ անմիջապէս թարգմանուեցան Աստուծոյն, ապա՝ Լատիններէն, Իսլամաւանի համայնագէտ ժան Սրոթ Սրիթենի ծնողով, Թ. դարուն, որմէ վերջ լաւ ճանչցուեցան Ռեւմուտքի մէջ: Ս. Թովմաս մօտէն ուսումնասիրած է զանոնք անպայման: Թէեւ հնդկական անկաւեր ըլլալը ծանօթ եղաւ վաղուց, սակայն գիրքերուն ներքին արժէքը փրկեց զանոնք արհամարհանելէ: Եւ, մեր դարուն, յայտնի Քուէյզըր գիտնական մը, միսթիսիզմի մասին գրուած ուսումնասիրութեան մը մէջ, կեղծ՝ Դիոնիսիոսի նուիրած է համաթարգմանք լեզուն զլուխ մը եւ ընտրուած տեղ մը քրիստոնեայ միսթիկներու շարքին:

ԳԼՈՒԽ Դ.

Ս. ԱՆՍԵԼՄԻ ԵՒ ԲԱՆԱԿԱՆ ՓԱՍՏԸ

Նոր՝ Պղատոնական գաղափարներու թափանցումը քրիստոնէական հայեցողութենէն ներս՝ կարեւոր հետեւանքներ ունեցաւ քրիստոնեայ մտածողներու կեցուածքին վրայ ընտանական փիլիսոփայութեան հանդէպ: Ամբողջ հազար տարիներ, Պղատոնէ մինչեւ Արիստոտէլականութեան վերադարձումը, Մեծն Պետրոսի եւ Ս. Թովմայի ժամանակ, արհամարհուեցաւ Աստուծոյ փնտռութիւնը՝ բնութեան յայտնաբերումին միջոցաւ, ի նպաստ աստուածաբանութեան հասցնող այլ միջոցներու, եւ փորձառական գիտութիւնը քիչ ուշադրութեան առարկայ եղաւ: Միջին դարու սկիզբը, զուտ հայեցողութեամբ, Աստուծոյ գոյութիւնը փաստելու ամենէն հոչակաւոր փորձը եղաւ Ս. Անսելմի փորձը, ծանօթ առ հասարակ Էսաբանական Փաստ անունով: Այս փաստարկութիւնը չի դիմեր բնաբնութեան արտաքին կարգաւորութեան. մէկ խօսքով, փաստարկութիւնը կ'ըսէ թէ՝ — ինչպէս Պղատոն ցոյց տուած էր Գաղափարներու իր վարդապետութեան մէջ — բացարձակ հշմարտութեան, բացարձակ բարութեան, բացարձակ արդարութեան եւ այլն իմացքները՝ միտքին ստեղծումները չեն միայն, այլ ունին իրենց յատուկ իրա-

կանութիւն մը, որ հիմը կը կազմէ ամենէն ընդհանուր նախադասութիւններուն, որպէս թէ անոնք ըլլային «նումեն»ներ, որոնց երեւոյթները — Ֆենոմեն — ըլլային անհատ էակները: Այս իմացքները պէտք է վերագրուին էակի մը որ մարմնացնէր զանոնք, էակ մը որ ըլլար Գաղափարներուն, ինչ որ Գաղափարներն են երեւոյթներուն, էակ մը «այնպէս» որ կարելի չըլլայ աւելի կատարեալը մտածել: Յաճախ առարկուած է որ Ս. Անսելմ կ'անցնի, առանց անհրաժեշտ արդարացումին, էակի ամենակատարեալ իմացքէն՝ անոր գոյութեան հաստատումին եւ թէ իմացքին եւ գոյութեան միջեւ վիճար անանցանելի է. այնպէս՝ կարելի է իմացքը ունենալ մարմնի մը որ կը շարժի երկվայրկեանը 31 միլիար սանթիմէն աւելի արագ եւ օական այդպիսի արագութիւն մը գոյութիւն չի կրնար ունենալ տիեզերքի մէջ որեւէ տեղ: Ուրիշ առարկութիւն մը եւս կայ թէ «այնպիսի էակ մը» որմէ աւելի կատարեալ կարելի չըլլայ մտածել» նախադասութիւնը տարօրինակ կերպով կը յիշեցնէ ուրիշ նախադասութիւն մը թէ՝ «թիւ մը» որմէ աւելի մեծը կարելի չըլլայ մտածել»։ Նախադասութիւն մը, որ չի համապատասխանիր որեւէ գոյութիւն ունեցող իրականութեան: Այսուհանդերձ, մարդ կը վարանի դատապարտել փաստարկութիւն մը, որ, թէեւ մերժուած Ս. Թովմայի կողմէ, սկզբունքով հաստատուած է Տէքարթի, Նիւթնի, Լայպիցիի եւ շէկրի կողմէ:

Խրգվ. ՇԱՀԷ ՎԱՐԴԱՊԵՏ

(Շարունակելի՝ 2)



ԽԱՌԱԴՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԻ

ԵՒ

ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Գեղեմյան 1960

Ս. ԷԶՍԻԱՄԻՆ

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆԻՆ,
ՊԱՏՐԻԱՐԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ,

Ս. ՆՐՈՒՍԱՂԷՄ

«Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանուրիւն սրբազան պաշտօն, վերսին կը հնչէ երկինքի եւ մարդկային խղճի բարձունքներէն, եւ մեր արեւը վերսին կը լեցունի քաղցր յոյսերով, անուշ յոյսերով»:

Տէր Ասուած, խաղաղութիւն բոլ ըլլալ աշխարհի վրայ ամեն սեղ, խաղաղութիւն բոլ իջնէ ազգերուն վրայ բոլոր, եւ ամենուս տուններէն աւերէն հետ:

«Խաղաղութիւն հեռուորաց, խաղաղութիւն մերձաւորաց», այս իսկ է շրջանն օրինաց եւ մարգարէից», զի «Ասուած ճիշտ է» եւ «Ասուած խաղաղութեան»:

Սեր եւ խաղաղութիւն նաեւ Ձեզի, Ամենապատիւ Սրբազան Նղբայր, ձեզ՝ գերաւեւորն եւ հոգեւորն հոգեւոր հայրեր Սրբոց Յակոբեանց միաբանութեան, ձեզ՝ Տնօրէն Ժողովոյ յարգաւորան անդամներ, ձեզ՝ ազգային-մշակութային, ճայրեմասիրական եւ բարեսիրական կազմակերպութեան անդամներ, ձեզ՝ հայ վարժարաններու եւ կիրակնօրեայ դպրոցներու աղբիւ մշակներ եւ սիրասուն աւակներէն, եւ մանաւանդ քեզ՝ յոյժ սիրեցեալ, հաւատարմաւ ժողովուրդ մեր:

Ձեզ բոլորիդ յոյս եւ շնորհք, զօրութիւն եւ խնդրութիւն Ս. Ծննդեան Տեառն վերոյ Յիսուսի Քրիստոսի:

Ձեզ բոլորիդ բարի օրեր, խաղաղ օրեր արեւով լի, առաքինի եւ սուրբ գործոց յաջողութեան պսակունով»:

Ձեզ բոլորիդ ոյժ եւ հռամք, միասնութեան ոգի արդար, կամք անկուր՝ եկեղեցին եւ Ազգը մեր պահպանելու միշտ կենդանի, միշտ անասամ, միշտ փառաւոր, շին ու պայծառ:

Սուրբազական Հայոց աշխարհէն, ամենայն հայոց Սուրբ Էջմիածնէն, արթաւ խիտով ձեզ բիւր մաղբաններ եւ բիւր օրհնութիւն, եւ ողջոյն, ողջոյն:


Շնորհաւոր Նոր Տարի եւ Ս. Ծնունդ:

«Սեր եւ խաղաղութիւն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ: Ամեն»:

ՎԱԶԳԷՆ Ա.

ԾԱՌԱՊԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆՆԵՐ

ՀԵՒԱԳԻՐՆԵՐ

Նորին Ամենապատուութիւն

Յղիւի Պատրիարք Տէրսէրեան

Պատրիարքարան Հայոց

Արցալին տնօրհակալութիւններ Ձեռք Ամենապատուութեան, Նոր Տառայի Ծննդեան Ձեռ տնօրհակալութիւններուն համար: Ընդունեցե՛ք մեր փոխադարձ շնորհակալութիւնները, մայրելով որ Տէր Ձեռի երկար կեանք իսկ Ս. Բակոբեանց Միաբնակութեան օգտակար եւ բարգաւաճ աւրիներ տնօրհնէ:

ՁԱՐԵՀ Ա.

Նորին Ամենապատուութիւն

Յղիւի Արքեպիսկ. Տէրսէրեան

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Շնորհակալութիւն եւ բարեմայրութիւն Ձեր օրհնութիւններուն համար: Հանեցե՛ք յնդուկ մեր լուսոյն տնօրհակալութիւնները Նոր Տառայ եւ Ս. Ծննդեան աւիրով:

Նախապահ

Կիրլլէկեկեան Հիմնարկութեան

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - Ի ԵՄԱԿԱՆՔ

● Կիր. 11 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թարսի թիւն, մեր փերնամարտան մէջ, ժամարարն էր Հոգչ. Տ. Թալէֆ Վրդ. Մամուր, Բարեպետ Հոգչ. Տ. Անուշաւան Վրդ. Չղչանեան, տեարան ռեւենուայով զեռ Յիսուս չայեցեալ ի նա՝ քերեաց զնա (Մրք. Ժ. 23):

● Աւր. 16 Դեկտ. — Առաջին Լուսաւորաց Նախատեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ: Հանդիսապետն էր Գեբշ. Տ. Սուրէն Արքեպիսկ. Բէմանեան:

● Եր. 17 Դեկտ. — Ս. Թաղուպի եւ Բարեպետի առաջնոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխաղորի մատարան մէջ, ժամարարն էր Հոգչ. Տ. Արշակ Արդ. Խաչատուրեան:

● Կիր. 18 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թարսի թիւն, մեր փերնամարտան մէջ, ժամարարն էր Հոգչ. Տ. Փառէն Արդ. Աւետիքեան, Բարեպետ Հոգչ. Տ. Կիրակի Վրդ. Գարեկեան:

Նիւթ ռեւենուայով օրուան ճաշու Աւետարանէն անպատու թղտիւնի առակը (Դկա. ԺԳ. 6-9), Բաւ. Թէ Նկեղեցւոյ Հայրերը երկու տարբեր մեկնութիւններ տուած են այս առակին: Մէկուն համաձայն, առակի թղտիւնի աշխարհօրէն կը ներկայացնէ իսրայէլի ժողովուրդը, որ հակառակ Աստուծոյ ընտելալ ժողովուրդը եղած ըլլալուն՝ չտուաւ իրեն ոչպատուած բարի պատուը, իսկ միւսին համաձայն՝ մեղմէ իւրաքանչիւրը թղտիւնի եւ Տէր Չղչանայի մէջ, առակ՝ պողպատեղեղ: Գեբշ. Տ. Նորայր Սրբապետ:

● Բշ. 18 Դեկտ. — Նախատեսակին ի Ս. Թաճար Նախապետեաց Գեբշ. Տ. Նորայր Սրբապետ:

● Դշ. 20 Դեկտ. — Ս. Հարցն եղիպացոց տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ հնադարեան մատարան մէջ: Ըստ տօնօրհանի, պատարագին էր խոստովանալու շուրջը՝ Հոգչ. Տ. Մաշտոց Վրդ. Բարեպետեան: ● Դշ. 21 Դեկտ. — Յղութեան տօնի հանդիսաւոր Նախատեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, Հանդիսապետն էր Գեբշ. Տ. Հայրիկ Եպ. Առանեան:

● Եշ. 22 Դեկտ. — Յղութիւն Ս. Աստածամոր: Առատուան, Գեբշ. Տ. Հայրիկ Եպ. Առանեանի զիտաւորութեամբ, Սիւրբան Հայրեր ինքնաշարժութեամբ մեկնեցան Գլխաղորի մօտ ու շարժափառով մօտեց զորմեցին Ս. Աստածամանայ Տաճար, ուր Տէրամբ Ս. Գեղեղմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ պատշաճ բարեպետի ղեկավարութեամբ: Գեբշ. Տ. Հայրիկ Եպ. Առանեան:

● Եր. 24 Դեկտ. — Ս. Նիկիտայոսի տօնակեցաւ հայրապետ տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին դռնի մէջ: Ս. Նիկիտայոսի տեղանի վրայ, ժամարարն էր Հոգչ. Տ. Անուշաւան Վրդ. Չղչանեան:

● Կիր. 25 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թաճար, Պատարագն էր քարոզեց Հոգչ. Տ. Կիրակի Վրդ. Գարեկեան, Նիւթ ռեւենուայով օրուան ճաշու Աւետարանէն հոյնաւորին առակը (Դկա. ԺԳ. 16-24):

● Աւր. 30 Դեկտ. — Նախատեսակին ի Ս. Թաճար Նախապետեաց Գեբշ. Տ. Սուրէն Արքեպիսկ.:

● Եր. 31 Դեկտ. — Ս. Եսայայ Մծնկալ հայրապետի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխաղորի մատարան մէջ, ժամարարն էր Հոգչ. Տ. Դաւիթ Վրդ. Սահակեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

● Կիր. 11 Դեկտ. — Air Jordan Ընկերութեան կողմէ, Ամպատատոր պատկերի մէջ, Մերապոյտի Նախագահ Սամար Բիֆայիի ի պատիւ տրուած հաշկերոյթին ներկայ եղան Հոգչ. Տ. Տաճէն Հ. Հոգչ. Տ. Օնան վրդ.ներ եւ Տիար Գ. Հինդլեան:

● Եշ. 15 Դեկտ. — Մոսկուայի Ամեն. Տ. Ալէքսի Համայն Ռուսաց Պատրիարքը, որ Սրբապետ Նիկիտայոսի կարեւոր կենդանեան այցելե-

լու առաքելութեամբ եկած էր Միջին Արեւելք, այսօր կէսօրէ առաջ ժամանեց Ս. Պաղպաճ Պատրիարքարանին կողմէ, Ամեն. Ս. Հիւրը դիմաւորելու համար օգակայան գացին Գերշ. Տ. Հայրիկ եպոս. և Հոգշ. Տ. Գեորգ Վրդ.:

— Կէս ժամ հոգե, Գերշ. Սրբազանն ու Հոգշ. Հայրը, Դիրենց կետ ունենալով Տիար Կարպիտ Հինգլեանը, Ներկայ եղան Պեմբրէյի Պատուէն թագաւորի ամուսնութեան առթիւ Պեմբրէյական ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի տան մէջ տրուած ընդունելութեան:

— Նոյն օրը, Անթիւիտանէ Ս. Աթոս ժամանեց Հոգշ. Տ. Սմբատ Արք. Լափանեան և մեկնեցաւ յաջորդ օրը:

● Գշ. 21 Գեկտ. — Թուսպ Ս. Պատրիարքի Ներկայացուցիչները, ցիտուարութեամբ Գերշ. Տ. Նիքոստեմոս Արքեպիս. Կայնյեցին Պատրիարքարանին և ընդունուեցան Պատր. Փոխարեորդ Գերշ. Տ. Հայրիկ եպոս. Աւանանի կողմէ:

● Եշ. 22 Գեկտ. — Կէսօրին, Գերշ. Տ. Հայրիկ եպոս. ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Կիրեղ և Հոգշ. Տ. Գեորգ վարդապետներու և Հոգշ. Տ. Տ. Աւրանի, Փառէն և Վրթմանէ առեղաներու, ինչպէս նաև Տիար Կ. Հինգլեանի, փոխադարձ այցելութիւն տուաւ Թուսպ Պատրիարքին, Թուսպ Պատրիարքարանի Գալիլիոյ (Համարածման լեռ) հովիտին մէջ:

● Բշ. 26 Գեկտ. — Կէսօրէ առաջ, Եւրոպաց. առջ Ս. Մենդեան տունին առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ի գլուխ Միարանութեան, շնորհաւորութեան զնայ Ֆրանչիսկեանց Կիւթթատին և Լատինայ Ս. Պատրիարքին, Ապա, կետն ունենալով Գերշ. Տ. Հայրիկ եպոս. և Հոգշ. Տ. Գեորգ Վրդ. և Տիար Կ. Հինգլեանը, այցելեց Անկիթան զաջ եպիսկոպոսներուն և Պապական Նուիրակին, իսկ Գերշ. Տ. Հայրիկ եպոս., ընկերակցութեամբ մի քանի Հոգշ. Հայր, այցելեց Յոն-Կաթողիկ և Հայ-Կաթողիկ Մեծաւորներուն, Մարտիրոսներու եպոս. և Լուսորակներուն երէցին:

● Եր. 31 Գեկտ. — Կէսօրէ առաջ, Պաղպաճ Կաթողիկոսը հաղթաւ Հայր Լուի Հիւր Վիստանի թաղման արարողութեան, Դոմինիկաներու Ս. Ստեփանոս վանքին մէջ, Ներկայ եղան Հոգշ. Տ. Անուշաւան և Հոգշ. Տ. Յովսէփ վարդապետներ:

ՏԻՐԱՀԱՅՐ ԶԱԿՈՐ ՍԱՀԱԿԵԱՆ

Անցնող տարւոյ Դեկտ. 26ին, Երկուշաբթի ե. ընկոյ, Կարնատե Կիւստիկներէ մը ետք, ի Տէր Կանդեաւ քաղաքի ծանօթ աղագայիններէն և Ս. Աթոսայ Միարան ու Ամանի Հայր Հոգեւոր Հովիւ Տ. Դաւիթ Վրդ. Սահակեանի հայրը՝ Տիար Յակոբ Սահակեան, — Հանգուցեալը ծնած է Սեբաստիոն 1902ին: Ա. Համալիարհային Պատրիարք մէն ետք հաստատուած է Երուսաղէմ, ուր կազմած է ընտանիք, հայր գրաւարով ճ գաւակներու, Եղած է ընտանութեամբ բարեհաճութիւն և եկեղեցեացէր, իր գաւակներուն մասունք և Ֆիլիքական կրթութեան կետ նաև անոնց հոգեւոր արթնութեան հոգածու հայր մը: — Յուդարկաւորութիւնը կատարուեցաւ Երեւոյթի կէսօրէ վերջ, Ս. Էլմիին ժամարան մէջ, մասնակցութեամբ բովանդակ Միարանութեան և Նախագահութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպիս. որ այս առթիւ խոսեցաւ զամրանական մը, զընտանիքով հանգուցեալին եկեղեցեայութիւնը: Մարմինը ժամպիտեցաւ Զամ-Թաղի գերեզմանավայրը: — Սիրով, այս առթիւ, յանուէ Ամեն. Ս. Պատրիարք Հայր և Ս. Յակոբեանց Միարանութեան, իր խոր վշտակցութիւնը կը յայտնէ Հոգշ. Տ. Դաւիթ Վրդի և իր ընտանեկան պարագաներուն, հայցելով Երկուշաբթի Հօրմէն օր իր լոյսերուն մէջ հանգչեցնէ հանգուցեալի բարի հոգին:

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՍԸ

Մեծայարգ Տեառք Ն. Պալեան և Մ. Դարուգաշեան յախնայակիի հաստատութեան ծանօթ վարպետները, խաչոր ու նկարէն վազ մը նուիրեցին Պատրիարքարանին նոր յարգարուած գործիչին համար: — Սրտագին Հնորհակալութիւններ այս պատուական և բարեկրօն աղագայիններուն, որոնք առաջին անգամը չէ որ Պատրիարքարան կը զարգարեն իրենց արուեստի ձեռագործներով:

تصدرها - بطريقه الأرمن الأرثوذكس - المدير والمحرر المسؤول - صاحب النياحة الاسقف هايكازون أبراهيان

المدد ١

تطبع في مطبعة دير الأرمن - القدس

يناير ١٩٦١

Proprietor—His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor—Bishop Haigazoun Abrahamian, Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

1961-ի «ՍԻՈՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Սրուստյեմե

Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողոթեան՝ Պողոթեան Գրատան (Հուլիս):
» » » » Տիար Հարօլա Աղամեանին (Տօրքէսթըր):
Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան՝ Հոգշ. Տ. Նշան Վրդ. Փափազեանին (Նիւ Ճըրզի):
Հոգշ. Տ. Հայկասեհ Վրդ. Պայրամեան՝ Տիար Սարգիս Ենիբազմեանին (Անթիլիսսա):
Հոգշ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեան՝ Տիար Մովսէս Խաչիկեանին (Նիւ Ճըրզի):
Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիէան՝ Տիար Մխիթար Գաբրիէանին (Նիւ Եսթ):
Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան՝ Տիար Նազար Նազարեանին (Թէրսոն):
Հոգշ. Տ. Գեղամ Արք. Զաքարեան՝ Տիար Յակոբ Զաքարեանին (Պէյրուսթ):
Ուրարակիի Տրց. Յովհաննէս Այվազեան՝ Տիար Յարութիւն Այվազեանին (Պէյրուսթ):
Տիար Մուրաթ Մանուկեան՝ Տիար Միհրան Գալպիտեանին (Լոսանոն):
Տիար Մովսէս Ճանոյեան՝ Տիար Յակոբ Ճանոյեանին (Տիթրոյթ):
Տիար Յակոբ Թազարեան՝ Տիար Նշան Առաքելեանին (Աղեքսանդրիա):
Տիար Նշան Ինկիլիզեան՝ Թաշնոց Բոյնին (Ճիւլէյլ, Լիբանան):
Տիար Յարութիւն Յակոբեան՝ Տիար Դաւիթ Գաբրիէանին (Գալիֆոքրիա):
Տկ. Զապէլ Օհանեան՝ Տիար Վահան Օհանեանին (Տիթրոյթ):

Ամմանե

Հոգշ. Տ. Դաւիթ Վրդ. Սահակեան՝ Հոգշ. Տ. Արսէն Վրդ. Աւետիքեանին (Թաւրիզ):
» » » » Տիար Վահան Ստեփանեանին (Կալկաթա):

Պալսասե

Տիար Լեւոն Յովհաննէսօֆ՝ Տիար Սահիան Յովհաննէսօֆին (Լոսանոն):

Ս. Էջմիածնե

Գերշ. Տ. Հայկազուն Եպս. Արարամեան՝ Տիար Անուշաւան Սիմոնեանին (Պէյրուսթ):
» » » » Տիար Հայկ Օհաննէսեանին (Դահիլէ):

Փարիզե

Գերշ. Տ. Սերոբէ Եպս. Մանուկեան՝ Տիար Արշակ Սարգիսեանին (Ֆրէզնո):
» » » » Տիար Մարութ Յովհաննէսեանին (Մօնթէվիսէօ):

Պրիւֆուի

Հոգշ. Տ. Ներսէս Վրդ. Բապուճեան՝ Տիար Սարգիս Բապուճեանին (Պէյրուսթ):

Ամերիկայե

Արթ. Տ. Վարդան Քչյ. Աւագեան՝ Տիար Տիգրան Պապուկեանին (Նիւ Ճըրզի):
Արթ. Տ. Արսէն Քչյ. Աշեան՝ Տիար Յակոբ Յարութեանին (Ֆրէզնո):
» » » » Տկ. Աննա Թիւրքեանին (Պրուքլին):
Տիար Կարապետ Հօփլմազեան՝ Տիար Պարսամ Պարսամեանին (Տիթրոյթ):
Տիար Հայկ Մարտիրոսեան՝ Տիար Արսէն Հոկոբեանին (Ֆլօրիսսա):
Տկ. Աննա Ուիլիսոն՝ Տկ. Սուլթան Եռսուֆեանին (Ամերիկա):
Օր. Խանըմ Սարգիսեան՝ Տիար Մարտիրոս Գաբրիէլեանին (Սան Ֆրանչիսկո):
» » » Ֆրէզնոյի Հանրային Մատենադարանին:
» » » Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Մատենադարանին:

**յՈՒՆՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆ ՀԵՏՆԵՑԱԼ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- Անլեյի Զանգուկասուի - Պարոյր Սիմոնի, Նուէր Տ. Հայկազուն Եպս. Արարամեանէ,
Երեւան, Հայպետարատ, 1959, էջ 266.
- Փուլոց Գեղեցկագոյն Պատմութիւններու (Ա. Հատոր) - Ս. Զաւէն (Նուր.), Պէյրուս, 1960,
Թամեպոյ Այապագ (Քերթուածներ) - Սարատ Տէրունեան (Նուիրատու), Նիկոսիա, Տպ.
Պէյրուս, 1959, էջ 110.
- Ի Խորոյ Սրի Խոսք Անց Պատշեղոյն (Արծաւ Քերթուածներ) - Միքայէլ Ս. Կիւրճեան
(Նուիրատու), Գահրէ, Տպ. Պէյրուս, 1960, էջ 53.
- Իրական Գիտելիքներ - Զարեհ Միքոնեան (Նուիրատու), Պէյրուս, 1960, էջ 119.
- Կ'ուրի՜ք Պարեւ - Թ. Աւան (Նուիրատու), Հալէպ, 1960.
- Համոյ Եւ Ֆասիլէ - Ասատուր Կիւզէլեան (Նուր.), Կապիթալ, Տպ. Պէյրուս, 1960, էջ 77.
Թէհրանէն՝ Տպ. Ա. Մակարեան կը նուիրէ. —
- ա) Անճանօր - Էլլէն Բիւզանդ, Թէհրան, 1960.
բ) Նոր Կիլիկ - Էլլէն Բիւզանդ, Թէհրան, 1960.
գ) Իմ Պատասխանք - Հազար Քոչարեան, Թէհրան, 1958.
դ) Արճեմներ - Հայրապետ, Թէհրան, 1956.
- Թուրք Զաւակներու - Եղ. Պօյաճեան (Նուիրատու), Պէյրուս, 1960, էջ 116.
Տառապանքներու Հետ - Կ. Ս. Միքայէլ (Նուիրատու), Պէյրուս, 1960.
- Թաւառ Ապրիլեան Նահապետներուն - Արմէն Տ. Նոյեան, Նուէր Թ. Թ. Նազարեանէ,
Պէյրուս, 1960.
- Հայահամար Լիբանանի Թեմի - Եակոբ Թ. Նազարեան (Նուիրատու), Պէյրուս, 1960.
Ծակի Ծակ (Ա. Գրքոյ) - Պետրոս Քարծայր, Մատենաշար Ապրիլեան Աղետի թիւ 5.
Նուէր Ներսէս Վրդ. Բախարեանէ, Անթիլիաս, Տպ. Կաթոլ. Կիլիկիոյ, 1960.
- Պատմագիրք Մարգարիտի Հայ Աւետարանականութեան - Վեր. Աւետիս Ս. Տարագճեան
(Նուիրատու), Պէյրուս, 1960. [Փարիզ, 1960.]
- Հայաստան (Ուղեցոյց և Երևանի Յատկագիրք) - Թադևոս Թադևոսեան (Նուիրատու),
Ողբ Պատմութեան Աղետեալ Զոհերու - 1960 Ապրիլ 1ի, Նուէր Թովաննէն Շէմսեանէ,
Պէյրուս, 1960.
- Համալսարանային Կրօններ Մաս. Հիմունքներ (Ա. Հատոր) - Լևոն Մարտիրոսեան,
Պէյրուս, 1960.
- Արարատեան Ծաղիկներ (Բանաստեղծութիւններ) - Եակոբ Գոյալմանեան (Նուիրատու),
Ֆրիտաէլֆիա, 1960, էջ 164.
- SELECTIONS FROM TENNYSON (Stencilled) - Presented by Y. Dikranian.
- THE RABBULA GOSPELS - Presented by the Trustees of St. Sarkis Charity Trust,
London. Olten & Lausanne, URS Graf, 1959.
- THE OPHTHALMIC HOSPITAL - Jerusalem. On the occasion of its formal opening
on 11 Oct. 1960 (English & Arabic).
- RELIGION IN THE USSR - Institute for the Study of USSR. Munich, July 1960.
- INT. BANK FOR RECONSTRUCTION AND DEVELOPMENT - Fifteenth Annual
Report (1959-60). Washington, 1960.
- ARMENIAN LEGENDS AND POEMS - Zabelle C. Boyadjian. Presented by Gregoris
Arratoon, London. Published by A. G. B. U. (Golden Jubilee).
- ACYOA 14th ASSEMBLY SOUVENIR BOOKLET - Presented by Joseph Kalemker-
ian. New York, 1960.
- L'ARMENIE - Jean Pierre Alem (présenté par lui). Paris, 1959.
- CONTRIBUTION A LA PREHISTOIRE DU MOYEN-ORIENT - Doct. C. G. Guilbenk-
an (présenté par lui). Paris, 1960.